«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

«ԵՐԵՎԱՆԻ ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ԱՆՎԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ»
ՊՈԱԿ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2025

ՆԱԽԱԲԱՆ

Երևանի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի և արվեստի պետական քոլեջի (այսուհետ՝ քոլեջ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումի համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգում և իրականացնում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» (ՈԱԱԿ) հիմնադրամը: Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011թ. հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ: Գնահատումը կատարվել է ՀՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի փորձագետներից: Հավատարմագրման գործընթացն իրականացվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ֆինանսավորմամբ: Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Զեկույցը պարունակում է քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ 4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 5

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 11

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 11

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 11

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 14

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 14

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 16

III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 21

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 26

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 30

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 34

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 37

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 41

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 44

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 46

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 51

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 52

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ ... 52

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 53

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 56

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 58

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 59

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 60

ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

Այս բաժնի նպատակն է ծանոթացնել ընթերցողին ՄՈՒՀ-ի գործունեության համատեքստին՝ տրամադրելով տեղեկատվություն գործունեության միջավայրի, կրթական ծրագրերի և գնահատման գործընթացը պայմանավորող այլ առանցքային ուղղությունների մասին: Չափանիշներում ներկայացվող փաստերն ու դատողությունները կառուցվել են՝ հաշվի առնելով ՄՈՒՀ-ի գործունեության արտաքին համատեքստը և ներքին միջավայրը:

ՄՈՒՀ-ի գործունեությունը և պատմությունը

«Երևանի մշակույթի և արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը ստեղծվել է 2020 թվականի սեպտեմբերի 9-ին՝ «Երևանի մշակույթի պետական քոլեջի» և «Երևանի էստրադային և ջազային արվեստի պետական քոլեջի» միավորման արդյունքում: 2022թ.-ին քոլեջն անվանակոչվել է Շառլ Ազնավուրի անունով:

Քոլեջը գտնում է ինստիտուցիոնալ հավատարմագրման առաջին շրջափուլում:

ՄՈՒՀ-ի զարգացման ուղղությունները և կրթական ծրագրերը

Քոլեջը միջին մասնագիտական կրթություն է իրականացնում ՈԱՇ-ի 5-րդ մակարդակին համապատասխան: Քոլեջը մասնագիտացված է հիմնականում արվեստի և մշակույթի ոլորտներում մասնագետների պատրաստման գործում՝ իր առաքելությունը համարելով այնպիսի մասնագետներ պատրաստելը, որոնք իրենց մասնագիտական գիտելիքներով, կարողություններով և պրակտիկ հմտություններով կարձագանքեն առկա մարտահրավերներին՝ համապատասխան գործողություններով աջակցելով ՀՀ և համաշխարհային մշակույթի զարգացմանն ու կայացմանը:

Քոլեջը կրթական գործունեություն իրականացնելու լիցենզիաների հիման վրա իրականացնում է միջին մասնագիտական 11 կրթական ծրագիր՝ «Երգեցողություն», «Ռեժիսուրա», «Դերասանական արվեստ», «Արվեստի ստեղծագործությունների վերականգնում, կոնսերվացում և պահպանում», «Հաշվապահական հաշվառում», «Լուսանկարչական գործ», «Հագուստի մոդելավորում և նախագծում», «Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ», «Էստրադային արվեստ», «Պարարվեստ», «Գործիքային կատարողական արվեստ» (ըստ գործիքների տեսակների):

Հաստատությունում ներկայումս կրթություն է ստանում 636 ուսանող:

Քոլեջում դասավանդում են 119 դասախոս, որոնցից 112-ը ունեն համապատասխան բարձրագույն կրթություն, 7-ը՝ միջին մասնագիտական: Քոլեջի 3 դասախոս գործատուներ են, իսկ շրջանավարտ-դասախոսների թիվը 7-ն է:

Կարիերայի կենտրոնը 2020 թվականից ունի շրջանավարտների տվյալների բազա, որը պարբերաբար թարմացվում է: Ըստ քոլեջի տրամադրած տվյալների (2022-2023ուստարի)՝ մասնագիտությամբ աշխատում է շրջանավարտների 28,5%-ը, իսկ 25,1%-ը շարունակում են իրենց կրթությունը այլ ուսումնական հաստատություններում:

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

Երևանի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի և արվեստի պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ հաստատությունը գտնվում է ինստիտուցիոնալ հավատարմագրման առաջին շրջափուլում: Փորձագիտական խումբը հաշվի է առել նաև, որ Քոլեջի առաքելությունը մշակույթի և արվեստի ոլորտում այնպիսի մասնագետներ պատրաստելն է, որոնք իրենց մասնագիտական գիտելիքներով, կարողություններով և պրակտիկ հմտություններով կարձագանքեն առկա մարտահրավերներին՝ համապատասխան գործողություններով աջակցելով ՀՀ և համաշխարհային մշակույթի զարգացմանն ու կայացմանը: Քոլեջի 2021-2026 թթ. ռազմավարական ծրագիրը ներառում է կրթական ծրագրերի կատարելագործման, ուսանողների մասնագիտական զարգացումը խթանող քաղաքականությունների և որակի ապահովման համակարգի ամրապնդմանն ուղղված նպատակներ: Փորձագիտական խումբը գտնում է, որ ռեսուրսների բաշխման և նպատակների իրագործման պատասխանատուների հստակեցումը կբարձրացնի ռազմավարական ծրագրի գործնական կիրառելիությունը և հնարավորություն կտա իրականացնել ծրագրի իրականացման արդյունավետության գնահատում:

Քոլեջն ունի կառավարման ճկուն համակարգ՝ ներառելով կոլեգիալ և միանձնյա կառավարման տարրեր: Փորձագիտական խմբի գնահատմամբ, կառավարման այս կառուցվածքը նպաստել է ուսումնական միջավայրի բարելավմանը, հատկապես «Ազնավուր» հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում կրթական միջավայրը շարունակաբար բարելավվում է: Այնուամենայնիվ, կառավարման գործընթացում ֆինանսական ռազմավարական պլանավորման և այլընտրանքային ռեսուրսների ներգրավման մեխանիզմների ներդրումը կարող է նպաստել հաստատության կայուն զարգացմանը: Բացի այդ, քոլեջն անհրաժեշտություն ունի ուշադրություն դարձնելու պլանավորման և հաշվետվությունների ձևաչափերի համահունչության ապահովմանը, ինչը կնպաստի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը:

Որակի ապահովման ներքին համակարգը գտնվում է ներդրման մեկնարկային փուլում: Թեև կատարվել են որոշակի քայլեր, ինչպիսիք են որակի ապահովման պատասխանատուի հաստիքի ներդրումը և որոշ հարցումների իրականացումը, այնուամենայնիվ տվյալների հավաքագրման և վերլուծության միասնական համակարգի բացակայությունը թույլ չի տալիս ապահովել հավաստի տվյալներ կառավարչական որոշումների կայացման համար: Փորձագիտական խումբը գտնում է, որ անհրաժեշտ է բարելավել նաև շահակիցների հետ հետադարձ կապի մեխանիզմները, շարունակաբար հավաքագրել տվյալներ քոլեջի գործունեության ոլորտների վերաբերյալ և պարբերաբար վերլուծել

դրանք, ինչը կբարձրացնի որակի ապահովման համակարգի ազդեցությունը քոլեջի ինստիտուցիոնալ կառավարման ու զարգացման վրա:

Քոլեջի իրականացրած կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը և մշակույթի ու արվեստի ոլորտային պահանջներին: Կրթական ծրագրերը, հիմնված լինելով պետական չափորոշիչների վրա, նպաստում են ուսանողների ստեղծագործական և գործնական հմտությունների զարգացմանը: Այնուամենայնիվ, ծրագրերի մշակման և բարելավման գործընթացներում ներդրված չեն բենչմարքինգի և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ: Հաստատությունում առկա են որոշ հաջողված նախաձեռնություններ, ինչպիսիք են ընտրովի դասընթացների և գործնական բաղադրիչի ընդգրկումը, որոնք խթանում են ուսանողների մասնագիտական հմտությունների խորացումը և վերլուծական մտածողության զարգացումը: Դեռևս կարգավորված չէ նաև ուսումնական ծրագրերի պարբերական վերանայման և աշխատաշուկայի փոփոխություններին արձագանքելու համակարգը, ինչին հաստատությունը կարող է հասնել՝ ծրագրերի արդիականության պահպանման համար:

Պրոֆեսորադասախոսական կազմը հանդիսանում է հաստատության կարևորագույն ռեսուրսներից մեկը: Դասավանդման ընթացքում կիրառվող անհատականացված մոտեցումները, հատկապես կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների համար, վկայում են ներառականության մակարդակի բարձրացման մասին: Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջի ուշադրության կենտրոնում պետք է լինի դասախոսների մասնագիտական զարգացման և վերապատրաստումների իրականացումը, ինչը կնպաստի նոր մեթոդների կիրառմանը և միջազգային փորձի ներդրմանը կրթական ծրագրերում: Փորձագիտական խումբը կարևորում է նաև ներքին լավ փորձի տարածման մեխանիզմների ներդրումը, գործատուների և գործատու-դասավանդողների հետ փորձի փոխանակման միջոցառումների իրականացումը, ինչը կնպաստի դասախոսական կազմի մասնագիտական զարգացմանը:

Ենթակառուցվածքներն ու ռեսուրսները կարևոր են կրթական ծրագրերի իրականացման համար: Վերջին տարիներին զգալի բարելավումներ են իրականացվել քոլեջի ռեսուրսների համալրման և շենքային պայմանների արդիականացման ուղղությամբ՝ «Ազնավուր» հիմնադրամի հետ համագործակցության շնորհիվ: Սա հնարավորություն է տալիս ապահովել ավելի որակյալ կրթական միջավայր և ստեղծագործական գործունեության կազմակերպման հնարավորություններ: Այնուամենայնիվ, ռեսուրսների համալրումն անհրաժեշտ է շարունակել հատկապես եզակի մասնագիտությունների համար նյութատեխնիկական բազայի ապահովման տեսանկյունից: Ֆինանսական ռեսուրսների սահմանափակությունը կարող է ազդել ենթակառուցվածքների պահպանման և նորացման ծրագրերի վրա: Փորձագիտական խումբը կարևորում է այլընտրանքային ֆինանսական աղբյուրների միջոցով քոլեջի ֆինանսավորման ավելացումը, ինչը հնարավորություն կտա համապատասխան ֆինանսական հոսքերն ուղղել ենթակառուցվածքների զարգացմանը, վերապատրաստումների իրականացմանը՝ ապահովելով քոլեջի համաչափ զարգացումը:

Քոլեջը ստեղծել է ուսանողակենտրոն միջավայր, որտեղ խրախուսվում են ուսանողների ակտիվ մասնակցությունը և ստեղծագործական նախաձեռնությունները: Դասընթացների ընթացքում ուսանողներին տրամադրվում են գործնական առաջադրանքներ, որոնք խթանում են նրանց վերլուծական մտածողության և պրակտիկ հմտությունների զարգացումը: Սակայն ուսանողներին

հետադարձ կապի տրամադրման մեխանիզմները կարիք ունեն հստակեցման և համակարգվածության[1]: Բացի այդ, անհրաժեշտ է իրականացնել ուսանողների կարիքների պարբերական ուսումնասիրություն կրթական միջավայրի շարունակական բարելավման նպատակով:

Հետազոտական գործունեությունը քոլեջում գտնվում է զարգացման փուլում: Ուսումնական գործընթացում ներդրված են հետազոտական բաղադրիչներ՝ ուսանողների առաջադրանքների և ավարտական նախագծերի շրջանակում: Բոլոր հետազոտական առաջադրանքների ներառմամբ առաջադրանքների բազայի ձևավորումը կարևոր է հետազոտական աշխատանքների համակարգված իրականացման ու ուսանողի մասնագիտական հետագիծը ձևավորելու տեսանկյունից: Փորձագիտական խումբը կարևորում է նաև դասախոսական կազմի՝ հետազոտական գործունեությամբ զբաղվելու խրախուսման մեխանիզմների ներդրումը, ինչը թույլ կտա ամբողջովին օգտագործել դասավանդող համակազմի հետազոտական ներուժը, իսկ իրականացված ուսումնասիրությունների արդյունքների ներդրումը կրթական ծրագրերում կնպաստի ուսանողների կարողությունների զարգացմանը միտված կրթական ծրագրերի շարունակական բարելավմանը:

Հասարակական պատասխանատվության ուղղությամբ քոլեջը կարևոր դեր է խաղում՝ պահպանելով և զարգացնելով ՀՀ մշակութային ժառանգությունը: Քոլեջը կազմակերպում է տարբեր հանրային միջոցառումներ, ներառյալ՝ ներկայացումներ, ցուցահանդեսներ և ստեղծագործական նախագծեր, որոնք խթանում են մշակույթի տարածումը և հանրության մասնակցությունը: Այս նախաձեռնությունները նպաստում են հաստատության ճանաչելիության բարձրացմանը և համայնքի ներգրավվածության ապահովմանը: Այնուամենայնիվ, հասարակական պատասխանատվության քաղաքականությունը և արդյունքների գնահատման մեխանիզմները դեռևս բավարար չափով մշակված չեն, ինչը սահմանափակում է հաստատության ազդեցության մասշտաբը:

Արտաքին կապերի և միջազգայնացման տեսանկյունից քոլեջն իրականացրել է մի շարք համագործակցություններ, որոնք նպաստել են ռեսուրսների համալրմանը և ուսանողների ու դասախոսների մասնագիտական աճին: Սակայն միջազգային շարժունության ծրագրերը դեռևս սահմանափակ են, իսկ դասախոսների և ուսանողների մասնակցությունը միջազգային փոխանակումներին՝ նվազագույն: Քոլեջը կարիք ունի մշակել հստակ քաղաքականություն՝ ուղղված կրթական ծրագրերի զարգացման ուղղությամբ միջազգային կապերի կիրառմանը, ինչը թույլ կտա ներգրավել նորարարական փորձը և խթանել կրթական ծրագրերի արդիականացումը:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1) ներքին և արտաքին շահակիցների կողմից ընկալելի առաքելության առկայությունը,
2) ճկուն և արտաքին կապերի ճիշտ օգտագործման միջոցով քոլեջի զարգացմանն ուղղված կառավարման համակարգը,
3) ստորաբաժանումների միջև հորիզոնական արդյունավետ համագործակցությունը,
4) ուսանողականետրոն միջավայրի առկայությունը՝ ուսանողի կարիքի հիման վրա դասավանդման տարբեր մոտեցումների կիրառմամբ,

[1] Միտքը վերաձևակերպվել է հաստատության հետ քննարկման արդյունքում:

5) ուսանողների ներգրավումը ստեղծագործական գործընթացներում ու ուսանողների նախաձեռնողականության խթանումը,

6) գործատուների հետ համագործակցության շնորհիվ ռեսուրսների համատեղ կիրառումը և պրակտիկաների կազմակերպումը,

7) տեղական ու միջազգային փառատոններին մասնակցության միջոցով փորձի փոխանակումը։

Հաստատության թույլ կողմերն են.

1) ռազմավարական գնահատման ցուցիչների անհստակությունը,
2) տվյալների հավաքագրման միասնական համակարգի բացակայությունը,
3) կրթական ծրագրերի համեմատական վերլուծության մեխանիզմների պակասը,
4) արտաքին կապերի միջոցով ձեռքբերված փորձառությունը կրթական ծրագրերի բարելավման ուղղությամբ չներդնելը,
5) դասախոսների մասնագիտական վերապատրաստումների պակասը,
6) ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների սահմանափակ ուղղությունները[2],
7) օտար լեզվի իմացության բարձրացմանն ուղղված միջոցառումների բացակայությունը,
8) որակի ներքին ապահովման համակարգի կողմից կարիքների վերհանման ուղղությունների և կիրառվող մեխանիզմների ու մեթոդաբանության անհստակությունը։

Խորհրդատվություններ.

Տվյալահենք կառավարում

1) Մշակել հստակ պլան-ժամանակացույց ռազմավարական ծրագրի նպատակների իրագործման համար՝ սահմանելով յուրաքանչյուր գործողության պատասխանատուներին և անհրաժեշտ ռեսուրսները։
2) Դիտարկել տնօրենի հաշվետվությունը՝ համապարփակ ձևով առանձին ներկայացնելու հնարավորությունը։
3) Բազմազանեցնել շահակիցների կարիքների վերհանման մեխանիզմները՝ նրանց կարիքները և ակնկալիքները վերհանելու և ռազմավարական ծրագրում ներառելու համար։
4) Ներդնել տեղեկատվության հավաքագրման և վերլուծության հստակ մեխանիզմներ, ինչպես նաև հավաստի տվյալները դնել կառավարչական որոշումների կայացման հիմքում։
5) Հստակեցնել որակի ապահովման համակարգի դերը՝ սահմանելով դրա առջև դրված նպատակներն ու խնդիրները։

[2] Միտքը վերաձևակերպվել է հաստատության հետ քննարկման արդյունքում։

6) Իրականացնել որակի ապահովման համակարգի համեմատական վերլուծություն՝ առաջավոր փորձի ուսումնասիրման և տեղայնացման նպատակով։
7) Սահմանել հաշվետվությունների և պլանավորման միասնական ձևաչափ՝ գործընթացների համակարգվածությունն ապահովելու համար։
8) Ներդնել ընթացիկ գործընթացների և ռազմավարական ծրագրերի կատարողականի գնահատման մեխանիզմներ՝ պլանավորման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով։
9) Իրականացնել ռազմավարական նպատակներին համահունչ ֆինանսական պլանավորում՝ ներառելով նաև ֆինանսական միջոցների դիվերսիֆիկացիայի մեխանիզմներ։
10) Ապահովել կրթական ծրագրերի և խորհուրդների նիստերի արձանագրությունների հասանելիությունն արտաքին ու ներքին շահակիցների համար։

Որակավորումների արժանահավատ շնորհում

11) Յուրաքանչյուր կրթական ծրագրի համար ձևավորել ուսանողներին տրվող առաջադրանքների բազա[3]։
12) Հստակեցնել գնահատման չափանիշները՝ ուսանողների բոլոր վերջնարդյունքները գնահատելու ու նրանց աստիճանական զարգացումն ապահովելու համար։
13) Ամրապնդել միջառարկայական կապերը՝ խթանելով ուսանողների թիմային աշխատանքի հմտությունների զարգացումը և ավելացնելով ուսումնառության գործնական բաղադրիչը։
14) Ներդնել կրթական ծրագրերի բենչմարքինգի և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ և դրանց պարբերական կիրառման արդյունքները հաշվի առնել վերանայումներն իրականացնելիս։
15) Գործարկել դասախոսական կազմի ներքին լավ փորձի տարածման մեխանիզմներ։
16) Կանոնակարգել սկսնակ դասախոսների հետ տարվող աշխատանքները՝ սահմանելով նաև դրանց պարբերականությունն ու գնահատման մեխանիզմները։
17) Ներդնել մասնագիտական վերապատրաստման հնարավորություններ՝ կիրառելով նաև արտաքին շահակիցների հետ համագործակցությունը։
18) Ունենալ այլընտրանքային ռեսուրսների համալրման պլաններ՝ հաշվի առնելով հիմնանորոգման մեկնարկի հետ կապված բարդությունները։
19) Ներդնել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ՝ կառավարման գործընթացները և ներքին հաղորդակցությունն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով։

[3] Միտքը վերաձևակերպվել է հաստատության հետ քննարկման արդյունքում։

Երկարաժամկետ զարգացում

20) Ուսանողների կրթական կարիքներին համապատասխան կազմակերպել լրացուցիչ դասընթացներ մասնագիտական հմտությունների զարգացման նպատակով։
21) Հստակեցնել քոլեջի հետազոտական ուղղությունները՝ դրանք կապակցելով կրթական ծրագրերի ուղղություններին։
22) Հետազոտական առաջադրանքներն ամբողջովին արտացոլել կրթական ծրագրերում և մշակել դրանց գնահատման չափանիշներ։
23) Գնահատել ներքին շահակիցների՝ օտար լեզվի իմացության մակարդակը և ըստ կարիքի իրականացնել վերապատրաստումներ լեզվաիմացության բարձրացման և միջազգային ծրագրերում ներգրավման նպատակով։
24) Արտաքին ու միջազգային կապերն օգտագործել կրթական ծրագրերի լավ փորձի ուսումնասիրման ու տեղայնացման նպատակով։

Հերմինե Գրիգորյան
Փորձագիտական խմբի ղեկավար

17-ը մարտի, 2025 թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Երևանի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի և արվեստի պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի[4] կողմից.

Հերմինե Գրիգորյան՝ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի Բնական գիտությունների ֆակուլտետի դեկան, «Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի» ամբիոնի դոցենտ, փորձագիտական խմբի ղեկավար:

Լիլիթ Աբելյան՝ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի որակի պատասխանատու, փորձագիտական խմբի անդամ:

Օլյա Ավետիսյան՝ Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջի մասնագիտական առարկաների ամբիոնի դասախոս, փորձագիտական խմբի անդամ:

Մերի Հովսեփյան՝ Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջի ուսանող, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Քաղաքականության մշակման բաժնի մասնագետ **Մերի Բարսեղյանը:**

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում՝ համակարգողը, ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Երևանի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի և արվեստի պետական քոլեջը պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով: ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը: Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո քոլեջի և ՈԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

Ինքնավերլուծություն

Հաշվի առնելով ուսումնական հաստատությունների՝ ինքնավերլուծություն իրականացնելու կարողությունների պակասը և քոլեջներում որակի ապահովման մշակույթի ձևավորման կարևորությունը՝ ՈԱԱԿ–ը փետրվար ամսին 4-օրյա առցանց աշխատաժողովներ է իրականացրել:

[4] ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Աշխատաժողովների ընթացքում հավատարմագրվող ուսումնական հաստատություններին ներկայացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների մեկնաբանությունները ՄԿՈՒ հաստատությունների համար, ինստիտուցիոնալ հավատարմագրման հարցաշարը, ինքնավերլուծության ձևաչափը, SWOT վերլուծության իրականացման սկզբունքները և այլն։

Քոլեջին ընթացիկ աջակցություն տրամադրելու և ընթացիկ հարցերին պատասխանելու նպատակով կազմակերպվել են նաև միջանկյալ հանդիպումներ։

Երևանի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի և արվեստի պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների վերանայված ինքնավերլուծությունը ներկայացվել է 26.07.2024թ.-ին: Ինքնավերլուծությունն իրականացվել է հաստատության աշխատակիցների՝ ղեկավար կազմի, վարչական, դասախոսական և ուսումնաօժանդակ համակազմի կողմից։

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի[5], ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Այնուհետև փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց։

Նախնական այց

2024թ. նոյելբերի 19-ին հանդիպում է տեղի ունեցել քոլեջի ղեկավար կազմի հետ: Հանդիպմանը ներկա են գտնվել ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը, փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը: Հանդիպման ընթացքում քոլեջի ղեկավար կազմին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակցույցը[6], ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2024թ. նոյեմբերի 25-27-ն ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է քոլեջի ղեկավար կազմի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ, մասնակիցներն ընտրվել են նախօրոք տրամադրված ցանկից՝ ներկայացուցչականության սկզբունքով: Առաջնորդվելով

[5] ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ
[6] ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ: Փորձագիտական այցին նախորդող շաբաթվա ընթացքում փորձագիտական խումբն իրականացրել է նաև դասալսումներ և ռեսուրսների դիտարկում[7]: Փորձագիտական խմբի անդամները նաև մասնագիտական հանդիպումներ են ունեցել ընտրված երեք կրթական ծրագրերի պատասխանատուների, դասավանդող դասախոսների և ուսանողների հետ:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը: Նախնական զեկույցը փորձագիտական խմբի հաստատումից հետո տրամադրվել է քոլեջին 2025 թ.-ի հունվարի 22-ին:

Հաստատությունն իր դիտարկումները փորձագիտական նախնական զեկույցի վերաբերյալ ներկայացրել է 2025 թ.-ի փետրվարի 27-ին: Մարտի 5-ին ՈԱԱԿ-ում տեղի է ունեցել հանդիպում ՈԱԱԿ ներկայացուցիչների, քոլեջի տնօրենի, որակի ներքին ապահովման պատասխանատուի, փորձագիտական խմբի և համակարգողի մասնակցությամբ քննարկելու հաստատության ներկայացրած դիտարկումները:

Քննարկման արդյունքների հիման վրա փորձագիտական խումբը կազմել է զեկույցի վերջնական տարբերակը, որը բոլոր փորձագետների հաստատումից հետո տրամադրվել է քոլեջին 2025 թ.-ի մարտի 17-ին:

Մերի Բարսեղյան
Փորձագիտական խմբի համակարգող

17-ը մարտի, 2025 թ.

[7] ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

«Երևանի Շ. Ազնավուրի անվան մշակույթի և արվեստի պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության առաքելությունը սահմանված է 2021-2026թթ. զարգացման ռազմավարական ծրագրում: Քոլեջի առաքելությունը մշակույթի և արվեստի ոլորտում այնպիսի մասնագետներ պատրաստելն է, որոնք իրենց մասնագիտական գիտելիքներով, կարողություններով և պրակտիկ հմտություններով կարձագանքեն առկա մարտահրավերներին՝ համապատասխան գործողություններով աջակցելով ՀՀ և համաշխարհային մշակույթի զարգացմանն ու կայացմանը: Զարգացման ռազմավարական ծրագրով սահմանված են Քոլեջի տեսլականը, արժեքները, ռազմավարական նպատակներն ու իրագործման ուղիները:

Քոլեջի ռազմավարական նպատակներն ընդգրկում են հետևյալ ոլորտները՝ կառավարում և վարչարարություն, կրթական գործունեություն, ենթակառուցվածքներ ու ֆինանսական ռեսուրսներ, ուսանողակենտրոն քաղաքականություն, արտաքին կապեր ու միջազգայնացում, որակի ապահովման ներքին համակարգ: ՌԾ նպատակների իրականացման համար առանձին պլան-ժամանակացույց քոլեջը չի կազմել: ՌԾ-ում սահմանված գործողությունների իրականացման համար առաջընթացի գնահատման որոշ ցուցանիշների համար նշվել են ժամկետներ՝ ըստ ուստարիների: Ռազմավարական ծրագրի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ նպատակների իրագործման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները, պատասխանատուները հստակեցված չեն:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ սահմանված որոշ խնդիրների ուղղությամբ քայլեր են իրականացվել, այսպես օրինակ՝ քոլեջի կառավարման մարմինների գործառույթների հստակեցման նպատակով պաշտոնի անձնագրերի մշակում, ոլորտի կազմակերպությունների հետ պայմանագրերի և հուշագրերի կնքման միջոցով պրակտիկայի կազմակերպման հարթակների ընդլայնում, դասալսումների նոր կարգի մշակում, քոլեջի վերանայված վեբկայքի ստեղծում, արդիականցված և կահավորված տարեկան առնվազն մեկ մասնագիտական կաբինետ, Ուսանողական թատրոնի ստեղծում: Որոշ նպատակների ուղղությամբ քոլեջը տեսանելի քայլեր դեռ չի իրականացրել, օրինակ՝ քոլեջը նախատեսել է մշակել ռիսկերի բացահայտման և կառավարման ընթացակարգ, ստեղծել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության նոր համակարգ, մշակել ֆինանսական հոսքերը խթանող դրամաշնորհային ծրագրեր, ունենալ միջազգայնացման գործող քաղաքականություն, իրականացնել ՈԱ գործընթացներում ընդգրկված անձնակազմի պարբերական վերապատրաստում:

Քոլեջը միջին մասնագիտական կրթություն է իրականացնում ՈԱՇ-ի 5-րդ մակարդակին համապատասխան: Քոլեջը մասնագիտացված է հիմնականում արվեստի և մշակույթի ոլորտներում

մասնագետների պատրաստման գործում հետևյալ որակավորումներով՝ երգիչ-կատարող, ռեժիսոր, դերասան, էստրադային դերասան, երաժիշտ-կատարող, պարային համույթի դերասան, լուսանկարիչ, արվեստի ստեղծագործությունների վերականգնող-կոնսերվացնող։

Ըստ քոլեջի «Ներքին և արտաքին շահակիցների հետադարձ կապի ապահովման քաղաքականության»՝ հաստատության ներքին շահակիցներն են ուսանողները, դասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ կազմը, իսկ արտաքին շահակիցները՝ շրջանավարտները, գործատուները, դիմորդները և նրանց ծնողները, ոլորտի պետական և մասնագիտական կառույցները։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի ներքին և արտաքին շահակիցներն ընդհանուր առմամբ կիսում են քոլեջի որդեգրած առաքելությունը և սահմանված նպատակները։ Ներքին շահակիցների կարիքների հիման վրա ՌԾ-ում խնդիր է դրվել մանկավարժական համակազմի մասնագիտական գործունեության և գործնական պարապմունքների բարելավումը։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի ներքին և արտաքին շահակիցները հաստատության առաջընթացի ցուցիչներ են դիտարկում շրջանավարտների բարձր զբաղվածությունն ըստ իրենց մասնագիտությունների, ուսանողների ձեռքբերումները փառատոներին, արտագնա համերգներին, բուհ դիմած և ընդունված շրջանավարտների թիվը, «Ազնավուր» հիմնադրամի միջոցով ռեսուրսների բարելավումը։

Որպես Ռազմավարական ծրագրի իրականացման գնահատման մեխանիզմ՝ քոլեջը դիտարկում է հաշվետվությունները։ Տնօրենի տարեկան գործունեության արդյունքները լսվում են կառավարման և մանկավարժական խորհուրդների նիստերին, որտեղ այն քննարկվում և ընդունվում է։ Ըստ կառավարման խորհրդի արձանագրությունների՝ տնօրենի հաշվետվությունը ներառում է ընդունելիության ցուցանիշները, ֆինանսական մուտքերի և ելքերի կատարողականները, իսկ ամբիոնների հաշվետվությունները հիմնականում տալիս են ուսանողների առաջադիմության վերաբերյալ տվյալներ և կատարված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվություն։

Քոլեջը 2024թ. ընդունել է «Առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման քաղաքականությունն ու ընթացակարգ», ըստ որի ուսանողների համար դիտարկվում է ընթացիկ, միջանկյալ ատեստավորման, ամփոփիչ պետական ատեստավորման գնահատման համակարգը, դասախոսական կազմի համար՝ գործունեության գնահատման համակարգը, ռեսուրսների առումով՝ շենքային հնարավորությունների գնահատումը, ուսումնամեթոդական հիմքի գնահատումը, ֆինանսատնտեսական հիմքի գնահատումը, շրջանավարտների կարիերայի գնահատումը, գործատուի գնահատումը և այլն, սակայն այս գնահատումների համար գործիքներ, պատասխանատուներ և հստակ ժամկետներ սահմանված չեն։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջն իր առաքելությամբ կարևոր դեր է խաղում ՀՀ մշակութային ժառանգության պահպանման և ոլորտի զարգացման գործում։ Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ ռազմավարական ծրագրի արդյունավետ իրագործման համար անհրաժեշտ է մշակել հստակ պլան-ժամանակացույց, փորձել գտնել ֆինանսական ռեսուրսներ և սահմանել պատասխանատուներ։ Ռազմավարական ծրագրի փուլային և կազմակերպված պլանավորումը, ինչպես նաև ռեսուրսների հստակեցումը

կնպաստեն նպատակների արդյունավետ իրագործմանը՝ նվազեցնելով անորոշությունները, ինչը կապահովի քոլեջի առաքելության շարունակական և կայուն իրականացումը։

Փորձագիտական խումբը գտնում է, որ ներքին և արտաքին շահակիցների կողմից քոլեջի առաքելության և նպատակների ընկալումը վկայում է հաստատության ռազմավարության համապատասխանության մասին շահակիցների կարիքներին և սպասումներին։ Խումբը գտնում է, որ շահակիցների կարիքների պարբերական գնահատումն ու հետադարձ կապի մեխանիզմների ներդրումը կարող են թույլ տալ ավելի հստակ հասկանալ ծրագրի թերություններն ու ուժեղ կողմերը՝ նպաստելով դրանց ժամանակին վերափոխմանը և արդյունավետության բարձրացմանը։

Չնայած քոլեջը ներդրել է որոշ ցուցանիշներ ռազմավարական ծրագրի գնահատման համար, հստակ մեխանիզմների և պատասխանատուների սահմանումը կարող է զգալիորեն բարձրացնել գնահատման գործընթացի արդյունավետությունը։ Մեխանիզմների և ժամկետների հստակեցումը կստեղծի ավելի կառուցվածքային և համակարգված մոտեցում, ինչը կօգնի վերահսկել ծրագրի իրականացումը և արագ արձագանքել խնդիրներին։

Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջի կողմից ՌԾ նպատակների իրականացումն ամփոփող հաշվետվության իրականացումը թույլ կտա ավելի հստակ գնահատել ծրագրի առաջընթացը և դրա ճանապարհին եղած խնդիրներն ու ուժեղ կողմերը։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջն ունի հստակ սահմանված առաքելություն, նպատակներ ու խնդիրներ, ներքին և արտաքին շահակիցները կիսում են առաքելության ու քոլեջի դերի վերաբերյալ պատկերացումները, քոլեջը ներդրել է ռազմավարական ծրագրի առաջընթացի գնահատման որոշ ցուցիչներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 1-ի պահանջները։

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

«Երևանի մշակույթի և արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը ստեղծվել է 2020 թվականի սեպտեմբերի 9-ին՝ «Երևանի մշակույթի պետական քոլեջի» և «Երևանի էստրադային և ջազային արվեստի պետական քոլեջի» միավորման արդյունքում: 2022թ.-ին քոլեջն անվանակոչվել է Շառլ Ազնավուրի անունով: Միավորումից հետո հիմնական ուշադրությունը կենտրոնացվել է շենքային պայմանների և ռեսուրսների բարելավման վրա՝ «Ազնավուր» հիմնադրամի աջակցությամբ:

Հաստատության կառավարումն իրականացվում է քոլեջի կանոնադրությանը համապատասխան՝ միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցմամբ՝ Կառավարման խորհրդի և տնօրենի կողմից:

Կառավարման խորհուրդն իրականացնում է քոլեջի կոլեգիալ կառավարումը: Այն բաղկացած է 11 անդամից, որի կազմը հաստատում է ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը: Խորհրդի կազմում ընդգրկված են ուսանողության 3 ներկայացուցիչներ, դասախոսական կազմից 2 ներկայացուցիչներ, պետական կառույցների, «Ազնավուր» հիմնադրամի ներկայացուցիչներ, գործատուներ: Խորհրդի նիստերն անցկացվում են հաստատված աշխատակարգով: Կառավարման խորհուրդն իր լիազորությունների շրջանակում հաստատում է քոլեջի ռազմավարական ծրագիրը, նորմատիվ փաստաթղթերը, հաստատության կանոնակարգերը, ընթացակարգերը, ուսումնական գործընթացին առնչվող որոշումները, բյուջեի նախահաշիվը, ուսանողական կրթաթոշակները, զեղչերը և այլն:

Խորհուրդն ակտիվորեն ներգրավված է հաստատության կառավարմանը՝ շեշտադրելով քոլեջի դերը մշակույթի և արվեստի բնագավառում որակյալ մասնագետների պատրաստման գործում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Խորհուրդը դրական է գնահատում քոլեջի վերջին տարիների առաջընթացն ու դինամիկ զարգացումը՝ հատկապես կրթական ծրագրերի արդյունավետության համար անհրաժեշտ միջավայրի, շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի շարունակական բարելավման ուղղությամբ: Հատկապես կարևորվում է «Արվեստի կոնսերվացում և պահպանում» ծրագրի համար մասնագետների ներգրավումը, քանի որ մասնագիտությունն իրականացվում է միայն այս քոլեջում:

Փորձագիտական այցից և փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ խորհրդի վերջին նիստին քննարկվող հարցերի շրջանակում է եղել կրթական ծրագրերում ֆրանսերեն լեզվի փորձարարական ներդրումը: Տնօրենի առաջարկով և կառավարման խորհրդի հաստատմամբ որոշվել է քոլեջում 2025 թվականից անգլերեն և ռուսերեն լեզուներից զատ իրականացնել նաև ֆրանսերեն լեզվի փորձարարական ուսուցում որոշ կրթական ծրագրերում, ընթացիկ արդյունքների գնահատման հիման վրա նախատեսվում է այն ներդնել բոլոր կրթական ծրագրերում:

Հաստատության խորհրդի և տնօրենի կողմից կարևորվում են ֆինանսական արդյունավետ քաղաքականության իրականացումը և աշխատակիցների վարձատրության բարձրացումը: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ խորհուրդի կողմից որպես հաստատության գործունեության արդյունավետության ցուցիչներ դիտարկվում են փառատոններին, մրցույթներին, արտագնա համերգներին քոլեջի ուսանողների բազմաթիվ հաջողությունները և ձեռքբերումները, հաշվետու համերգները, շրջանավարտների հաջողությունները:

Քոլեջում գործում են նաև մանկավարժական և ուսանողական խորհուրդներ: Մանկավարժական խորհրդի գործունեության կարգը և իրավասությունները սահմանվում են «Մանկավարժական խորհրդի կանոնակարգ»-ով: Մանկավարժական խորհրդի նիստերին քննարկվում են կրթական գործունեությանը, ուսանողների ուսումնառությանը, քոլեջի ընթացիկ գործունեությանն առնչվող այլ հարցեր, ինչպես նաև ընթացիկ աշխատանքների արդյունքները, թերացումները և խնդիրները:

Ուսանողական խորհուրդը ձևավորվում է «Ուսանողական խորհրդի կարգ»-ի համաձայն: Կարգը սահմանում է ուսանողական խորհրդի գործունեությունը, լիազորությունները, ինչպես նաև հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինների հետ կապված իրավահարաբերությունները:

Քոլեջում գործում են 6 ամբիոններ: Քոլեջի ամբիոնների ցանկը, ամբիոնների վարիչների և դասախոսական կազմը հաստատվում է տնօրենի հրամանով մեկ տարի ժամկետով ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենի առաջարկով: Ամբիոնների ընդհանուր ղեկավարումն իրականացնում է ուսումնակաան աշխատանքերի գծով փոխտնօրենը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հաշվի առնելով կրթական ծրագրերի առանձնահատկությունները և ուսանողների աճող թիվը՝ «Երաժշտության, ընդհանուր երաժշտական տեսական առարկաների գծով» ամբիոնը ձևավորվել է գործող ուսումնական տարում: Նշված ամբիոնում միավորված են երաժշտության մասնագիտության տեսական դասընթացները, իսկ կատարողական արվեստի դասընթացները համակարգվում են «Երաժշտության մասնագիտություն և կատարողական արվեստի» ամբիոնի կողմից:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը դեռևս չի իրականացրել ֆինանսական մանրամասն պլանավորում՝ գնահատելու, թե որքան միջոցներ են անհրաժեշտ ռազմավարական նպատակների իրագործման համար, և դրանց ներդրումն ինչ արդյունավետության կարող է հանգեցնել: Քոլեջի ֆինանսական միջոցները հիմնականում ձևավորվում են պետբյուջեից և ուսանողական վարձավճարներից: 2024թ. բյուջեի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քոլեջի եկամուտների 73.77%-ը կազմել է պետական ֆինանսավորումը, իսկ 26.23%-ը՝ ուսանողական վարձավճարները: Ֆինանսական պլանավորումը կատարվում է տարեկան՝ ֆինանսատնտեսական նախահաշվի նախագծի հիման վրա, որը հաստատվում է Կառավարման խորհրդի կողմից: Ռեսուրսների համալրում տեղի է ունենում նաև «Ազնավուր» հիմնադրամի աջակցությամբ:

Քոլեջի եկամուտների և ծախսերի վերլուծության համաձայն՝ 2024թ. կտրվածքով ընդհանուր ծախսերի 88.01%-ը բաժին է ընկնում աշխատավարձի ֆոնդին, 7.03%-ը ծառայությունների և ռեսուրսների ձեռք բերմանը, սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման համար՝ 1.67%, այլ ծախսեր՝ 3.29%:

Անդրադառնալով կազմակերպական կառուցվածքին՝ հարկ է նշել, որ քոլեջում միավորումից հետո իրականացվել են կառուցվածքային որոշակի փոփոխություններ: Մասնավորապես, փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ միավորման արդյունքում դասավանդող կազմի կրճատումներ տեղի չեն ունեցել, բայց ներդրվել են նոր հաստիքներ, մասնավորապես՝ կադրերի տեսուչի, կադրերի բաժնի վարիչի, կրթության որակի պատասխանատուի, բուժքրոջ, պրակտիկայի համակարգողի հաստիքները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում ձևավորվում է երկու հաստիքացուցակ՝ հիմնական, որը ֆինանսավորվում է բյուջեի, իսկ մյուսը՝ արտաբյուջեի միջոցների հաշվին: Արտաբյուջեից ֆինանսավորվում են հաստատության ուսանողական թատրոնի ղեկավարի և երաժշտական աշխատանքների գծով տեղակալի հաստիքները:

Փաստաթղթերի ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ կազմակերպական կառուցվածքում և հաստատության հաստիքացուցակում առկա տնօրենի օգնականի և կրթական աջակցությունների աշխատանքների գծով փոխտնօրենի հաստիքները թափուր են, համալրման

անհրաժեշտություն քոլեջն այլևս չի տեսնում՝ հաշվի առնելով նոր հաստիքների ներդրումը և գործառույթների ներկայիս բաշխումը փոխտնօրենների ու ամբիոնների վարիչների միջև:

Հաստատության կազմակերպական կառուցվածքում ներկայացված են ստորաբաժանումների միջև հորիզոնական և ուղղահայաց կապերը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ստորաբաժանումների միջև համագործակցությունները բավականին սերտ են:

Կառավարման համակարգում դասախոսական համակազմի մասնակցությունն ապահովվում է կառավարման և մանկավարժական խորհուրդներում ընդգրկվածությամբ: Որոշումները շահակիցներին հասանելի են դառնում մանկավարժական խորհրդի նիստերի միջոցով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների նախաձեռնությամբ խորհրդում քննարկվել են կրթաթոշակների տրամադրման և պրակտիկաների վայրերի ընտրության հարցերը:

Քոլեջի գործունեությունն իրականացվում է 2021-2026 թվականների ռազմավարական երկարաժամկետ և ընթացիկ տարեկան կարճաժամկետ պլանավորումներով: Կառուցվածքային միավորները տալիս են կիսամյակային և տարեկան հաշվետվություններ կազմակերպական կառուցվածքով նախատեսված իրենց վերադասին: Հաշվետվությունները քննարկվում են մանկավարժական խորհրդի նիստերին: Տնօրենը հաշվետու է մանկավարժական և կառավարման խորհուրդներին, իրականացված գործընթացներն ամփոփվում են ԿԽ-ում և ներկայացվում խորհրդի նիստերի արձանագրություններում: Փաստաթղթերի դիտարկումից և փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջում պլանավորման և հաշվետվությունների կազմման մոտեցումները տարբեր են: Օրինակ, կարիերայի կենտրոնի և որակի ապահովման պատասխանատուների տարեկան պլանավորումներում նախատեսվող գործողությունները բացի ժամկետներից և պատասխանատուներից ենթադրում են նաև ակնկալվող արդյունքներ, սակայն մյուս օղակների տարեկան պլանավորումներում սահմանված են միայն նախատեսվող գործողությունները, դրանց կատարման ժամկետները, պատասխանատուները: Հաշվետվությունների դիտարկումը ցույց տվեց, որ վերլուծական բաղադրիչը թույլ է արտահայտված, հիմնականում ներկայացվում են իրականացված աշխատանքներն առանց արդյունքների վերլուծության:

Քոլեջն իր գործունեության վրա ազդող արտաքին և ներքին գործոնների վերլուծության մշակված գործիքակազմ դեռևս չունի. կառավարչական որոշումները հիմնականում հիմնվում են արտաքին շահակիցների հետ համագործակցության և նրանց կարիքների քննարկման վրա: Այսպես օրինակ, գործատուների հետ քննարկվում են պրակտիկաների կազմակերպման հնարավորությունները, ռեսուրսների կիրառումը գործնական պարապմունքների իրականացման համար:

Քոլեջն առաջնորդվում է ՊԻԳԲ շրջափուլով, այսպես օրինակ որոշ կրթական ծրագրեր գնահատումների արդյունքում փոփոխությունների են ենթարկվել, իսկ ամբողջական գնահատում նախատեսում են իրականացնել շրջափուլի ավարտին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը նախատեսում է գնահատել նաև ՌԾ-ը՝ հաջորդ ՌԾ-ի պլանավորումն իրականացնելուց առաջ: Գնահատման ու բարելավման մեխանիզմները դեռևս հստակեցված չեն:

Քոլեջն ունի ֆեյսբուքյան էջ, որտեղ լուսաբանվում են հաստատության ընթացիկ գործընթացները, շրջանավարտների հաջողությունները: Պաշտոնական կայքէջում տեղադրված են կանոնակարգերն ու ընթացակարգերը, սակայն կրթական ծրագրերի նկարագրերը հրապարակված

չեն: Կառավարման խորհրդի որոշումները ներկայացվում են Մանկավարժական խորհրդում ներքին շահակիցներին հասանելի դարձնելու նպատակով:

Քոլեջը դեռևս չունի շնորհվող որակավորումների, կառավարչական որոշումների մասին տեղեկատվության հավաքագրման գնահատման մեխանիզմներ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ «Երևանի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի և արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող կառավարման և զարգացման մոտեցումները նպաստել են հաստատության առաջընթացին և կրթական միջավայրի որակի բարձրացմանը: Կառավարման խորհրդի ակտիվ մասնակցությունն ապահովել է ռազմավարական խնդիրների լուծումը, ինչի արդյունքում ստեղծվել են բարելավված շենքային պայմաններ, ընդլայնվել է նյութատեխնիկական բազան: Սա հնարավորություն է տվել քոլեջին ապահովել կրթական ծրագրերի արդյունավետ իրականացում և ամրապնդել իր դերը մշակույթի և արվեստի ոլորտում:

«Ազնավուր» հիմնադրամի հետ համագործակցությամբ իրականացված ներդրումներն ու բարեփոխումները ոչ միայն բարելավել են ուսումնական միջավայրը, այլև բարձրացրել են քոլեջի գրավչությունը մասնագետների և ուսանողների համար: Սակայն կարևոր է շարունակել ռեսուրսների համալրումը՝ հատկապես եզակի մասնագիտությունների, օրինակ՝ «Արվեստի կոնսերվացում և պահպանում» ծրագրի համար, որպեսզի ապահովվի ծրագրի կայուն զարգացում:

Երկարաժամկետ հեռանկարում փորձագիտական խումբը կարևորում է կայուն ֆինանսական ռազմավարություն մշակելը, ինչը թույլ կտա պետական ֆինանսավորմանը զուգահեռ խթանել արտաբյուջետային միջոցների (օրինակ՝ դրամաշնորհների, հովանավորների, ծառայությունների իրականացման) ներգրավումը: Փորձագիտական խումբը կարևորում է ըստ ռազմավարական նպատակների ֆինանսական միջոցների պլանավորումը, ինչը թույլ կտա ապահովել սահմանված նպատակների ձեռքբերումը և ապահովել քոլեջի կայուն զարգացումը:

Կառուցվածքային փոփոխությունները, ամբիոնների ձևավորումը, նոր հաստիքների ներդրումը կարևոր քայլեր են քոլեջի՝ ուսանողների կրթական կարիքներին և կրթական ծրագրերի առանձնահատկություններին արձագանքելու տեսանկյունից: Սակայն կարևոր է ամբիոնների գործունեության և բաշխվածության պարբերական գնահատումը՝ խուսափելու ռեսուրսների կրկնակի բաշխումից և առավելագույն արդյունավետությամբ օգտագործելու առկա կարողությունները: Փորձագիտական խումբը գտնում է նաև, որ հաշվի առնելով, որ որոշ հաստիքների համալրման անհրաժեշտությունը քոլեջը չի տեսնում, անհրաժեշտ է վերանայել կազմակերպական կառուցվածքը՝ այն համապատասխանեցնելով առկա գործառութային շրջանակին:

Ռազմավարական և կարճաժամկետ պլանավորման առկայությունն ապահովում է հաստատության նպատակների իրականացումն ու առաջընթացի գնահատումը: Սակայն, տարբեր ստորաբաժանումների պլանավորման և հաշվետվությունների կազմման մոտեցումների անհամապատասխանությունը կարող է սահմանափակել գործընթացների ընդհանուր արդյունավետությունը: Փորձագիտական խումբը գտնում է, որ անհրաժեշտ է ներդնել միասնական ձևաչափեր պլանավորման և հաշվետվությունների համար, որոնք կներառեն ակնկալվող արդյունքների և դրանց գնահատման մեխանիզմների մանրամասն նկարագրությունը: Բացի այդ,

հաշվետվությունների վերլուծական բաղադրիչի ավելացումը կօգնի ոչ միայն արձանագրել իրականացված աշխատանքները, այլև գնահատել դրանց ազդեցությունը և նպաստել գործընթացների շարունակական կատարելագործմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է տվյալների շարունակաբար հավաքագրումը և դրանց հիման վրա կառավարչական որոշումների կայացումը, ինչը կնպաստի քոլեջի շարունակական զարգացմանը:

ՊԻԳԲ շրջափուլի որոշ օրինակների առկայությունը ցույց է տալիս որակի բարելավման գործընթացների ներուժը, սակայն դրանց ամբողջական իրականացումը դեռևս համակարգված չէ: ՌԾ-ի գնահատումը նախքան հաջորդ պլանավորումը կարևոր նախաձեռնություն է, իսկ գնահատման մեխանիզմների և մեթոդաբանության հստակեցումը կնպաստի դրանց արդյունավետության բարձրացմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջի պաշտոնական կայքի և սոցիալական մեդիայի հարթակների օգտագործումը հնարավորություն է տալիս հանրայնացնել ուսանողների և շրջանավարտների հաջողությունները, սակայն անհրաժեշտ է այդ հարթակները համալրել նաև կրթական ծրագրերի և կառավարման թափանցիկության վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությամբ: Փորձագիտական խումբը գտնում է նաև, որ անհրաժեշտ է ներդնել հրապարակումները գնահատող մեխանիզմներ, ինչը կնպաստի քոլեջի ռեսուրսների արդյունավետ ուղղորդմանը տեղեկատվության տարածման ու շահակիցների շրջանում իրազեկվածության բարձրացման նպատակով:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջի ճկուն կառավարումը նպաստել է միավորումից հետո հաստատության զարգացմանը, կառավարման օղակների աշխատանքները միտված են քոլեջի առաքելության իրականացմանը, դասախոսները և ուսանողները ներգրավված են որոշումների կայացման գործընթացներում, համագործակցությունների շնորհիվ հաստատությունը կարողացել է ապահովել ֆինանսական մուտքեր ու ուղղել դրանք ռազմավարական նպատակ հանդիսացող ռեսուրսների բարելավմանը, առկա են պլանավորման ու հաշվետվողականության որոշ մեխանիզմներ, քոլեջում որոշակիորեն ներդրված է ՊԻԳԲ շրջափուլը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 2-ի պահանջները:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

Երևանի Շ. Ազնավուրի անվան մշակույթի և արվեստի պետական քոլեջն իրականացնում է միջին մասնագիտական 11 կրթական ծրագիր՝ «Երգեցողություն», «Ռեժիսուրա», «Դերասանական

արվեստ», «Արվեստի ստեղծագործությունների վերականգնում, կոնսերվացում և պահպանում», «Հաշվապահական հաշվառում», «Լուսանկարչական գործ», «Հագուստի մոդելավորում և նախագծում», «Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ», «Էստրադային արվեստ», «Պարարվեստ», «Գործիքային կատարողական արվեստ» /ըստ գործիքների տեսակների/: Մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են քոլեջի առաքելությանը, իրենց կառուցվածքով, մոդուլների հաջորդականությամբ և բովանդակությամբ համապատասխանում են ՊԿՉ-ներին:

Հաստատությունում ներկայումս կրթություն է ստանում 636 ուսանող:

ՄՈՒՀ-ի դասախոսական կազմն ընդգրկված է եղել «Արվեստի ստեղծագործությունների վերականգնում, կոնսերվացում և պահպանում» մասնագիտության պետական կրթական չափորոշիչների և օրինակելի մոդուլային ծրագրերի մշակման աշխատանքային խմբում: Արդյունքում հստակեցվել են այս մասնագիտության որակավորումները՝ համապատասխանեցվելով աշխատաշուկայում պահանջված որակավորմանը: 2023 թվականին վերանայված կրթական ծրագրով շրջանավարտը ստանում է նաև տեխնիկ՝ նկարիչ-վերականգնողի նյութերի նախապատրաստման, տեխնիկ՝ էքսպոնանտների պահպանման որակավորում:

Բացի հիմնական հանրակրթական առարկաներից և մասնագիտական մոդուլային ծրագրերից, ուսումնական պլաններում կան նաև առարկաներ, որոնք ներդրվել են ընտրովի և պահուստային ժամերի հաշվին՝ հաշվի առնելով մասնագիտության և աշխատաշուկայի առանձնահատկությունները: Այսպես, «Դերասանական արվեստ» կրթական ծրագրում պահուստային ժամերի հաշվին դասավանդվում է «Գեղարվեստական կերպարի ստեղծում» դասընթացը, իսկ ընտրովի ներդրվել են «Տիկնիկների պատրաստման տեխնոլոգիա» և «Դրամատուրգիա» մոդուլները: «Արվեստի ստեղծագործությունների վերականգնում, կոնսերվացում և պահպանում» կրթական ծրագրում պահուստային ժամերից 72 ժամ հատկացվում է «Գծանկար» և «Գունանկար» մոդուլների համար նախկին 36 ժամի փոխարեն: «Հագուստի մոդելավորում և նախագծում» կրթական ծրագրում որպես ընտրովի դասընթացներ ներդրվել են «Տրիկոտաժի նախագծում» և «Տարազ» մոդուլները:

Ամբիոնների նիստերի արձանագրությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ կրթական ծրագրերի բարելավումների առաջարկությունները քննարկվում են ամբիոններում, օրինակ՝ Սոլֆեջիոյի և Երաժշտության տարրական տեսություն մոդուլները պետք է ընթանան զուգահեռ, արդյունքում կատարվել է դասընթացի տեղափոխություն կիսամյակից կիսամյակ, իսկ որոշ մոդուլների պարագայում փոխվել է մոդուլների թեմաների հերթականությունը և դասավորվել ըստ ժամանակագրական հերթականության՝ կրթական ծրագրի տրամաբանական հաջորդականությունը պահպանելու նպատակով:

Քոլեջում դասախոսների կողմից կիրառվող դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության միասնական մոտեցում առկա չէ: Դասախոսներն ունեն դասավանդման իրենց անհատական մոտեցումները՝ ելնելով մոդուլների առանձնահատկություններից: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների համար ընտրվում են դասավանդման անհատական մեթոդներ, ինչպես նաև հանձնարարականների կատարումն ապահովվում է դասապրոցեսում ծնողների, օգնականների ներգրավման միջոցով:

Դասալսումների և փորձագիտական հանդիպումների արդյունքում պարզ դարձավ, որ դասավանդման գործընթացում դասախոսները կարևորում են ուսանողների ստեղծագործական և հետազոտական մտքի զարգացումը: Այսպես օրինակ՝ վերլուծական մտածողությունը զարգացնելու համար «Պատմություն» դասընթացից ուսանողներին տրվում են առաջադրանքներ սխալ տվյալներով, ուսանողները փորձում են վերլուծել և գտնել սխալները: Հետազոտական կարողությունների զարգացման նպատակով «Հագուստի մոդելավորում և նախագծում» կրթական ծրագրի շրջանակներում ստանում են առաջադրանք ուսումնասիրել լեգենդները, պատումները համապատասխան ժամանակաշրջանին բնորոշ հանգուստներ նախագծելու և պատրաստելու համար:

«Արվեստի ստեղծագործությունների վերականգնում» դասընթացում 3-րդ կուրսը ստանում է առաջադրանք արվեստի որոշ ստեղծագործության վիճակի նկարագրի կազմում և այդ նկարագիրը հանձնում 4-րդ կուրսի ուսանողներին, որոնք արդեն կատարված նկարագրի հիման վրա կատարում են այդ գործի վերականգնում, նորից վերադարձնում 3-րդ կուրսի ուսանողներին արդեն վերականգնած գործի նոր նկարագիրը կազմելու և վերականգնումը գնահատելու համար: «Դերասանական արվեստ»-ում ուսանողները բեմադրությանը զուգընթաց կատարում են վերլուծական աշխատանք՝ կերպարի վերլուծություն և դերի պաշտպանություն: Ինչպես նաև, «Դերասանական արվեստ»-ում տարբեր դասընթացների շրջանակներում ուսանողներին հանձնարարվում է ստեղծել նովելներ, պատմվածքներ, բեմադրությունների, ներկայացումների սցենարներ, էտյուդներ, սոնետներ, պիեսներ, իրականացնել գրական ստեղծագործությունների, կերպարների վերլուծություններ:

Կարևորելով ուսանողների մոտ գեղարվեստական կերպարի ստեղծման հմտությունների ձևավորումը, «Տիկնիկների պատրաստման տեխնիկա» դասընթացի շրջանակում ուսանողներին հանձնարարվում է ինքնուրույն պատրաստել տիկնիկներ, ստեղծել կերպարներ, դրանց հիման վրա ինքնուրույն գրել ներկայացումների սցենարներ: Դասընթացների ժամանակ հաճախ կազմակերպվում են պիեսների, դասական ստեղծագործությունների, ֆիլմերի, ներկայացումների դիտումներ և այլն:

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ նաև, որ դասավանդող մասնագետների կողմից խրախուսվում է բեմադրությունների, մոնոներկայացումների թեմաների ընտրությունն ուսանողների կողմից:

Առաջադրանքների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանք կազմվում են աստիճանական բարդացման սկզբունքով: Առաջադրանքները ներառված են դասախոսների փաթեթներում, սակայն ըստ կրթական ծրագրերի՝ հանձնարարականների ամբողջական բազա դեռ ձևավորված չէ: Կատարողական մասնագիտություններում փորձում են ուսանողի հետագծին հետևելու համար ձայնագրել կատարումները առաջին կուրսից մինչև վերջին կուրսի ավարտական քննություններ՝ տեսանելի դարձնելով նրա կատարողական հմտությունների առաջընթացը:

Հաստատությունում գործում է «Ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և բողոքարկման» կանոնակարգը: Ըստ կանոնակարգի՝ գնահատումն իրականացվում է ուսումնառության ընթացքում (ընթացիկ), կիսամյակի և ուսումնական տարվա ավարտին (ամփոփիչ), ուսումնառության ավարտին (պետական ամփոփիչ ատեստավորում): Մոդուլների գնահատման արդյունքը գնահատվում է «անցել է» կամ «չի անցել», իսկ ստուգարքները և քննությունները գնահատվում են 10 միավորային համակարգով, պետական ամփոփիչ ատեստավորումը գնահատվում է 20 միավորային համակարգով: Փորձագիտական այցից պարզվեց, որ քոլեջում գնահատականի բողոքարկման դեպքեր չեն գրանցվել:

Ուսումնական պլաններում առկա են պրակտիկայի հետևյալ տեսակները՝ ուսումնական, մասնագիտական, նախաավարտական, ինչպես նաև առկա են ընթացիկ պրակտիկաներ: Պրակտիկայի վերաբերյալ հաշվետվություն ներկայացնում է պրակտիկայի ղեկավարը, վերջինս էլ գնահատում է ուսանողներին՝ պրակտիկայի վայրերի հետ հետադարձ կապի միջոցով:

Ուսանողների գնահատականներն արտահայտված են պրակտիկայի օրագրերում: Պրակտիկայի գնահատման ժամանակ հաշվի են առնվում հաճախումները, տեսական գիտելիքների գործնական կիրառումը, սակայն հստակ չափանիշներ՝ ըստ գնահատման սանդղակի, առանձնացված չեն: Պրակտիկայի վերահանձնում չի սահմանվում:

Ամփոփիչ ատեստավորումն իրականացվում է հաստատված հարցաշարերի հիման վրա, իսկ «Դերասանական արվեստ», «Պարարվեստ» մասնագիտություններում բացի տեսական ավարտական քննությունից, ուսանողները հանձնում են խմբային ավարտական աշխատանքներ, համապատասխանաբար ներկայացում, խմբային պար, բայց գնահատվում են անհատական: Ինչպես նաև ամփոփիչ ատեստավորման ժամանակ «Դերասանական արվեստում» ներգրավվում են այլ մասնագիտություններից ուսանողներ՝ հագուստի մոդելավորողներ, գեղանկարիչներ, աջակցում են ներկայացման կայացմանը, որը միջառարկայական կապերի ձևավորման օրինակ է:

Ամփոփիչ ատեստավորման քննությունների արձանագրությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ հանձնաժողովը հիմնականում ավելի բավարարված է կատարողական մասից, սակայն տեսության յուրացման մեջ նկատվում են թերացումներ:

«Դերասանական արվեստ» մասնագիտության դասընթացների ընթացիկ և ամփոփիչ գնահատումները հիմնականում իրականացվում են գործնական առաջադրանքների միջոցով. ներկայացումների, մոնոներկայացումների, էտյուդների, սոնետների, բեմադրությունների հանձնումով: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ գնահատելիս կարևորվում են ուսանողների անհատական կարողությունները, առաջընթացը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ընթացիկ և ամփոփիչ գնահատումների ժամանակ ուսանողներին տրվում է հետադարձ կապ, բացատրվում են թերությունները ընթացիկ զարգացումն ապահովելու համար:

Հաստատությունը կրթական ծրագրերի բենչմարքինգ չի իրականացրել, դրա իրականացման կարգ և հստակ մեխանիզմներ քոլեջում ներդրված չեն: Քոլեջի դասախոսներն ու ուսանողները շարժունության ծրագրերի դեռևս չեն մասնակցել: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսներն անհատական մակարդակում իրենց մոդուլային ծրագրերը կազմելիս դիտարկում են ոլորտի փոփոխությունները, սակայն նման ուսումնասիրությունների իրականացման պահանջ քոլեջը չի դրել:

Քոլեջը չունի կրթական ծրագրերի գնահատման, մշտադիտարկման և բարելավման հստակ սահմանված ընթացակարգեր: Այսուհանդերձ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ յուրաքանչյուր տարի ամբիոնների և ուսումնական մասի կողմից դիտարկվում են անհրաժեշտ փոփոխությունները: Դրանք վերաբերել են գործնական պարապմունքների ժամաքանակի ավելացմանը, դասընթացներում թեմաների փոփոխություններին, մոդուլների դասավանդման հաջորդականությանը: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների արձանագրությունները ևս պարունակում են կրթական ծրագրերի բարելավմանն ուղղված առաջարկներ, որոնցից որոշների ուղղությամբ քայլեր քոլեջն իրականացրել է՝ ավելացնելով գործնական բաղադրիչը, ուսանողների կերտած դերերի նկարագրությունները: Այսուհանդերձ, դրանք համակարգված ու պարբերական ձևով դեռևս չեն վերլուծվում հաստատության կողմից:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջի կողմից իրականացվող միջին մասնագիտական կրթական ծրագրերը հիմնված են պետական կրթական չափորոշիչների վրա և համապատասխան են հաստատության առաքելությանը: Այդ համատեքստում հատկապես կարևոր է, որ քոլեջի դասախոսները մասնակցել են «Արվեստի ստեղծագործությունների վերականգնում, կոնսերվացում և պահպանում» մասնագիտության չափորոշչի մշակմանը, ինչի արդյունքում կրթական ծրագրի բովանդակությունը դարձել է աշխատաշուկայի պահանջներին առավել համապատասխան:

Դրական է նաև, որ կրթական ծրագրերում ներդրված են ընտրովի և պահուստային ժամերի հաշվին դասընթացներ, որոնք հնարավորություն են տալիս խորացնելու ուսանողների մասնագիտական գիտելիքները: Փորձագիտական խումբը կարևորում է առաջադրանքների աստիճանական բարդացման և վերլուծական-ստեղծագործական հմտությունների զարգացման մոտեցումը, ինչը նպաստում է ուսանողների անհատական առաջընթացին և նրանց խորացված մասնագիտացմանը: Հատկապես կարևոր է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների համար կիրառվում են անհատականացված մեթոդներ, որոնցում ներգրավվում են ծնողները և օգնականները՝ ապահովելով ներառական ուսումնական միջավայր:

Խումբը դրական է գնահատում, որ ամփոփիչ ատեստավորման և գործնական առաջադրանքների կիրառման միջոցով ապահովվում է ուսանողների ձեռք բերած հմտությունների իրական գնահատումը: Այնուամենայնիվ, գնահատման չափանիշների հավելյալ հստակեցումը և բողոքարկման գործընթացի ավելի մատչելի ներկայացումը կարող են բարձրացնել համակարգի թափանցիկությունը և ուսանողների վստահությունը: Բացի այդ, պրակտիկաների գնահատման հստակ չափանիշների մշակումը կարևոր է ուսանողների առաջադիմությանն օբյեկտիվ արձանագրելու համար:

Չնայած ամբիոնների և ուսումնական մասի մակարդակով ամեն տարի կատարվում են որոշ ծրագրային փոփոխություններ, կրթական ծրագրերի բարելավման հստակ ընթացակարգեր, ինչպես նաև համեմատական վերլուծություններ (բենչմարքինգ) համակարգված ձևով չեն իրականացվում: Այս բացը դժվարեցնում է ծրագրերի շարունակական արդիականացումը և լավագույն փորձի ներմուծումը: Դասախոսները հաճախ անհատական մակարդակում են դիտարկում ոլորտի փոփոխությունները, սակայն հաստատության կողմից այդ գործընթացի խթանումն ու համակարգումը թույլ կտա լայնորեն տարածել և կիրառել նորարարական մեթոդները:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջի իրականացրած կրթական ծրագրերը համապատասխանում են քոլեջի առաքելությանը և պետական կրթական չափորոշիչներին, դասախոսները, հաշվի առնելով ուսանողների առանձնահատկությունները, կիրառում են դասավանդման բազմազան մեթոդներ, ուսանողներին տրվում են կարողությունների զարգացմանն ուղղված տեսական ու գործնական առաջադրանքներ, սահմանված են գնահատման որոշ չափանիշներ, դասախոսներն ապահովում են անհրաժեշտ հետադարձ կապ ուսանողների արդյունավետ ուսումնառությանն աջակցելու համար, ներդրված են կրթական ծրագրերի մշտադիտարկման որոշ մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 3-ի պահանջները:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

Դիմորդների հավաքագրման և քոլեջի մասին տեղեկատվության տարածման նպատակով Երևանի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի և արվեստի պետական քոլեջն ընդունելության մասին տեղեկատվությունը տարածում է քոլեջի սոցիալական հարթակներում, այցեր է իրականացնում հանրակրթական ուսումնական հաստատություններ, կազմակերպում վարպետության դասեր: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները քոլեջի մասին տեղեկանում են հիմնականում իրենց ընկերներից և համացանցի միջոցով:

Ընդունելությունն իրականացվում է մասնագիտական քննությունների միջոցով: Այսպես օրինակ՝ «Դերասանական արվեստ» բաժնի համար դիմորդներին հանձնարարվում է արտասանել առակ, արձակ և չափածո, 1 էտյուդի ցուցադրում, որևէ ֆիլմի վերլուծություն, որևէ ռեժիսորի, դերասանի կյանքի և ստեղծագործության վերլուծություն, «Երգեցողություն» բաժնի համար՝ մասնագիտական քննություններն են՝ վոկալ, սոլֆեջո /բանավոր/, բեմական վարպետություն: Որոշ մասնագիտությունների համար (Հաշվապահական հաշվառում, Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ) ընդունելությունը տեղի է ունենում առանց քննությունների՝ ավարտական վկայականի գնահատականների հիման վրա: 2024-2025 ուստարվա ընդունելությանը 280 դիմորդից քոլեջ է ընդունվել 187-ը:

Ուսանողների թիվը վերջին չորս տարվա ընթացքում մեծ փոփոխության չի ենթարկվել: Քոլեջում հիմնական և միջնակարգ կրթության հիմքով սովորում է 636 ուսանող:

Ուսանողների հեռացումների ու վերականգնումների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ 2023-2024 ուստարում դուրս է մնացել ուսանողների 3.6%-ը, վերականգնվել՝ 8,4%-ը: Ուսանողների

հեռացման հիմնական պատճառներն են անհարգելի բացակայությունները, քոլեջի ներքին կարգապահական կանոնների խախտումը, ակադեմիական անբավարարությունը: Ակադեմիական անբավարարության հիմքով հեռացումների տոկոսը նվազեցնելու նպատակով քոլեջը կարևորում է կուրսղեկ-դասախոս-ծնող-ուսանող համագործակցությունը՝ գտնելու թերացումների պատճառները և մոտիվացնելու ուսանողներին ավելի լավ սովորել:

Քոլեջում ուսանողների կրթական կարիքների վերհանման հիմնական օղակները կուրսղեկներն են, կարիերայի կենտրոնն ու Ուսանողական խորհուրդը: Կարիքներն ուսումնասիրելու հիմնական մեխանիզմը հարցումներն են, որոնք կազմվում են կարիերայի կենտրոնի և որակի պատասխանատուի կողմից, ինչպես նաև ուսանողների ու տնօրենի միջև պարբերական հանդիպումները:

Ըստ կուրսղեկների աշխատանքային պլանի՝ քոլեջում անցկացվում են ուսանողների առաջադիմությանը, կարգապահությանը, ուսումնական հաստատության ներքին կարգապահական կանոններին իրազեկելուն ուղղված աշխատանքներ, ապահովում նաև ուսանողների մասնակցությունը ներքոլեջային և արտաքոլեջային տարբեր միջոցառումներին և այլն:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ուսանողների կրթական կարիքները վերհանվում են նաև ՈՒԽ-ի միջոցով: Այսպես օրինակ, ուսանողական խորհրդում վերհանվել է կուրսղեկների աշխատանքի մասին իրազեկվածության պակասն ուսանողների շրջանում, որից հետո ՈՒԽ-ն կազմակերպել է տեղեկատվական հանդիպումներ. ներկայումս ուսանողներն ակտիվորեն դիմում են կուրսղեկներին իրենց հուզող հարցերով, որոնք հիմնականում վերաբերում են կրթական գործընթացի կազմակերպմանը, կարգապահությանը:

ՈՒԽ-ն բաղկացած է 11 անդամից, համագործակցում է կարիերայի կենտրոնի հետ՝ ուսանողների կարիքները հասկանալու և միջոցառումներ կազմակերպելու նպատակով: Ուսանողական խորհրդի անդամներն այս ուսումնական տարում ակտիվացրել են միջոցառումների մասին իրազեկման աշխատանքները, ներգրավվել են հարցումների կազմակերպման աշխատանքներին: Այսուհանդերձ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այս հարցումները կրթական կարիքներին առնչվող խնդիրներ հիմնականում չեն վերհանում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների հետ քննարկումների արդյունքում ՈՒԽ-ի առաջարկով ձեռք են բերվել երաժշտական գործիքներ: Ուսանողական խորհրդի գործունեության համար առանձին բյուջե հատկացված չէ, սակայն քոլեջի տնօրինությունը պատրաստակամ է աջակցելու ուսանողներին միջոցառումների, էքսկուրսիաների կազմակերպման հարցերում: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջում Ուսանողական խորհուրդն ուսանողների կողմից դիտվում է որպես առավելապես միջոցառումների կազմակերպող մարմին: Ուսանողների իրավունքների խախտման դեպքեր չեն արձանագրվել, և այդպիսի հարցեր չեն քննարկվել Ուսանողական խորհրդում:

Քոլեջում չկան հստակ սահմանված խորհրդատվական պարապմունքներ, սակայն դրանք կազմակերպվում են ըստ անհրաժեշտության՝ քննություններին նախապատրաստվելու և ուսանողների անհատական հարցերին պատասխանելու նպատակով: Դասախոսները, ինչպես նաև ամբիոնները, պատրաստակամ են խորհրդատվություն տրամադրելու ուսանողներին ռեֆերատների թեմաների ընտրության, ավարտական աշխատանքների իրականացման և ամփոփիչ ատեստավորումների

վերաբերյալ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այլ լրացուցիչ պարապմունքներ, ինչպես օրինակ օտար լեզվի խորացմանն ուղղված դասընթացներ, քոլեջում չեն իրականացվում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ վարչական անձնակազմին դիմելու առանձին ժամանակացույց քոլեջում չկա: Ուսանողներն ազատ են մշտապես դիմելու վարչական անձնակազմին իրենց հուզող հարցերով, ինչպիսիք են օրինակ վարպետաց դասերի կազմակերպումն ու անհատական դասացուցակների կազմումը:

Ուսանողների ու շրջանավարտների մասնագիտական առաջընթացին նպաստելու համար քոլեջում գործում է կարիերայի կենտրոն, որի նպատակն է ապահովել քոլեջի և հանրապետության առաջատար ձեռնարկությունների ու գործատուների միջև համագործակցությունը, բարձրացնել քոլեջի մրցունակությունը աշխատաշուկայում, ինչպես նաև ամրապնդել շրջանավարտների հետ կապը:

Կենտրոնը կազմակերպում է վարպետաց դասեր, որոնց շրջանակում իրենց փորձառությամբ են կիսվում պատմամշակութային ժառանգության վերականգնման մասնագետները, երաժիշտներ, արվեստի ու մշակույթի գործիչներ: Ուսանողները ևս դիմում են կենտրոնին՝ կոնկրետ մասնագետների հրավիրելու և վարպետաց դասեր կազմակերպելու համար:

Քոլեջն ունի համագործակցության 25 հուշագիր՝ կնքված հանրապետության առաջատար ընկերությունների, մշակութային հաստատությունների և կազմակերպությունների հետ, ինչպիսիք են «Ալեքս» տեքստիլ ՍՊԸ-ն, «Շանթ» և «21TV» հեռուստաընկերությունները, Հ. Ղափլանյանի և Հ. Պարոնյանի անվան թատրոնները, «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը և այլն: Այս հուշագրերը հիմք են հանդիսանում ուսանողների պրակտիկայի կազմակերպման համար: Բացի այդ, կենտրոնը համագործակցում է ՀՀ շուրջ 50 պետական և մասնավոր կազմակերպությունների հետ՝ ուսանողներին և շրջանավարտներին թափուր աշխատատեղերի մասին տեղեկացնելու նպատակով:

Կարիերայի կենտրոնը 2020 թվականից ունի շրջանավարտների տվյալների բազա, որը պարբերաբար թարմացվում է: Ըստ քոլեջի տրամադրած տվյալների (2022-2023ուստարի)՝ մասնագիտությամբ աշխատում է շրջանավարտների 28,5%-ը, իսկ 25,1%-ը շարունակում են իրենց կրթությունը այլ ուսումնական հաստատություններում:

Քոլեջը կարևորում է ուսանողների ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում՝ նպաստելով նրանց վերլուծական մտածելակերպի զարգացմանը: Յուրաքանչյուր ստեղծագործական աշխատանքի մեկնարկից առաջ ուսանողները կատարում են ուսումնասիրություններ՝ անդրադառնալով թեմայի, նյութերի և տեխնիկայի մանրամասն վերլուծությանը: Օրինակ, «Դերասանական արվեստ» մասնագիտությամբ ուսանողներին հանձնարարվում են էտյուդներ, որոնք խթանում են նրանց ստեղծագործական միտքն ու բեմական դրսևորման ունակությունները: «Արվեստի ստեղծագործությունների վերականգնում, կոնսերվացում և պահպանում» մասնագիտության շրջանակներում ուսանողները յուրաքանչյուր աշխատանք մեկնարկելուց առաջ ուսումնասիրում են նկարը, նյութերը, տեխնիկան, ինչպես նաև նկարչի ոճը: Այնուամենայնիվ, այս առաջադրանքները դեռևս համակարգված չեն և հիմնականում կախված են դասախոսների դասավանդման մոտեցումներից ու առանձնահատկություններից:

Քոլեջում գործող կրթական ծառայությունները գնահատվել են հարցումների միջոցով, որոնք ներառել են հարցեր դասավանդման մատուցման ձևերի, գիտելիքների ու հմտությունների ձեռքբերման

վերաբերյալ: Հարցումները քոլեջում նոր են սկսել իրականացվել, այլ ծառայությունների արդյունավետության գնահատում քոլեջում դեռ չի իրականացվել:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում դիմորդների հավաքագրման ուղղությամբ քոլեջի կողմից իրականացվող աշխատանքները, որոնք նպաստում են ճանաչելիության բարձրացմանը և դիմորդների կայուն ներհոսքի ապահովմանը: Սոցիալական մեդիայի ակտիվ օգտագործումը և հանրակրթական հաստատություններ այցերի կազմակերպումը կարևոր գործիքներ են, որոնք աջակցում են դիմորդների ներգրավմանը: Կուրսղեկների կողմից իրականացվող նախաձեռնությունները նպաստում են ուսանողների առաջադիմության բարելավմանը և հեռացումների նվազեցմանը:

Խումբը դրական է գնահատում նաև քոլեջի ջանքերն ուսանողների կրթական կարիքների բավարարման ուղղությամբ, ինչը հանգեցրել է կուրսղեկների աշխատանքի ակտիվացման և ռեսուրսների համալրման: Այնուամենայնիվ, կրթական կարիքների վերհանման մեխանիզմների վերանայումը և բազմազանեցումը կօգնեն ստանալ ավելի ամբողջական պատկեր ուսանողների կարիքների մասին և բարելավումների համար հիմնվել հավաստի տվյալների վրա:

Այս համատեքստում կարևոր է նաև Ուսանողական խորհրդի դերը, որի ակտիվացումը կարող է նպաստել ուսանողների նախաձեռնողականության և կրթական կարիքների վերհանման գործընթացին: ՈւԽ-ի կողմից ուսանողների իրավունքների վերաբերյալ իրազեկման և դրանց պաշտպանության ուղղությամբ իրականացվող պարբերական աշխատանքները կնպաստեն ՈւԽ-ի ավելի արդյունավետ գործունեությանը՝ որպես ուսանողների իրավունքների պաշտպանության մարմին:

Կարիերայի կենտրոնի գործունեությունն արդյունավետ է հատկապես վարպետության դասերի կազմակերպման և գործատուների հետ համագործակցության ոլորտներում: Այնուամենայնիվ, հիմք ընդունելով շրջանավարտների զբաղվածության ցուցանիշները՝ փորձագիտական խումբը գտնում է, որ աշխատաշուկայի պահանջների պարբերական վերլուծության իրականացումը հնարավորություն կտա կրթական ծրագրերը համահնչեցնել աշխատաշուկայի պահանջներին, ինչը կբարձրացնի շրջանավարտների զբաղվածության մակարդակը: Շրջանավարտների հետ հետադարձ կապի հարթակի ստեղծումը ևս կարող է տրամադրել տվյալներ՝ կրթական ծրագրերի շարունակական բարելավման համար:

Հետազոտական աշխատանքների և ստեղծագործական առաջադրանքների իրականացումը խթանում է ուսանողների վերլուծական և ստեղծագործական մտածողությունը: Հետազոտական և ստեղծագործական նախագծերի իրականացման միասնական ուղեցույցների մշակումը, որը կներառի թեմաների ընտրության, աշխատանքի ընթացքի և գնահատման չափանիշների հստակեցում, կնպաստի ուսանողների վերլուծական, հետազոտական կարողությունների շարունակական զարգացմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջում իրականացվող կրթական ծառայությունների գնահատման հարցումների սահմանափակ շրջանակը կարող է խոչընդոտել կրթական գործընթացների վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելուն: Հարցումների պարբերական և ընդգրկուն իրականացումը, ներառյալ դասավանդման որակի, ռեսուրսների մատչելիության և ուսումնական

միջավայրի գնահատումը, կտրամադրի հավաստի տվյալներ՝ կրթական ծրագրերի և ծառայությունների բարելավման համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջն ունի ուսանողների հավաքագրման և ընդունելության հստակ մեխանիզմներ, ուսանողների կրթական կարիքների հիման վրա բարելավել է կրթական միջավայրը, դասախոսներն ու վարչական կազմը պատրաստակամ են տրամադրելու համապատասխան աջակցություն ուսանողների ուսումնառության ընթացքն ապահովելու համար, գործում են կարիերային միտված ծառայություններ, ուսանողների առաջադրանքներում առկա է վերլուծական բաղադրիչ, Ուսանողական խորհուրդն ակտիվորեն ներգրավված է ուսանողական միջոցառումների կազմակերպման գործում՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 4-ի պահանջները:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

Ըստ հաստատության 2021-2026թթ. ՌԾ-ի՝ Քոլեջը նպատակադրել է կադրային ներուժի զարգացումը: Սահմանված նպատակի իրագործման համար ՌԾ-ում որպես խնդիր սահմանվել է մանկավարժական համակազմի գործունեության արդյունավետության բարձրացումը հետևյալ քայլերով՝ բարելավել մանկավարժական համակազմի մասնագիտական գործունեությունը, գործնական պարապմունքները, վերանայել ուսումնաարտադրական և նախավարտական պրակտիկաների ծրագրերը:

Քոլեջի դասախոսական համակազմի ընտրությունն իրականացվում է՝ ըստ 2021թ. ընդունած «Մանկավարժական աշխատողների թափուր տեղի մրցույթի ընթացակարգի»: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ թափուր հաստիքների համալրման համար հայտարարվում և իրականացվում են մրցույթներ: Մրցույթից առաջ մասնագիտական ամբիոնը կազմում և հաստատում է հարցաշարը: Մրցույթի ընթացքում տեղի է ունենում հարցազրույց և հարցաթերթի լրացում թեկնածուի կողմից, որից հետո մրցութային հանձնաժողովի քվեարկությամբ հաղթող ճանաչված թեկնածուն համալրում է քոլեջի դասախոսական կազմը: Ընտրված դասախոսի հետ կնքվում է մեկ տարով աշխատանքային պայմանագիր, որն այնուհետև ժամկետի ավարտից հետո համաձայնագրով կարող է նորից մեկ տարով երկարաձգվել: Ներկայումս քոլեջում դասավանդում են 119 դասախոս, որոնցից 112-ը ունեն համապատասխան բարձրագույն կրթություն, 7-ը՝ միջին մասնագիտական: Քոլեջի 3 դասախոս գործատուներ են, իսկ շրջանավարտ-դասախոսների թիվը 7-ն է:

Յուրաքանչյուր մասնագիտության համար դասախոսներ ընտրելիս քոլեջը հաշվի է առնում թեկնածուի բազային կրթությունը, աշխատանքային փորձը (դասավանդման փորձառությունը), մրցույթի և որակավորման արդյունքները:

Դասախոսական կազմի ընտրության ու համալրման գործընթացի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դասախոսների մասնագիտական որակավորումները համապատասխանում են դասավանդվող առարկաներին և մոդուլներին: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ կան դասախոսներ օրինակ «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտությունում, ովքեր դասավանդում են 10-ից ավել մոդուլներ:

2024թ.-ին քոլեջում հաստատվել է «Առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման քաղաքականությունն ու ընթացակարգը», համաձայն որի՝ դասախոսական կազմի գործունեության գնահատումը կատարվում է պարբերաբար դասալսումների, ուսանողների շրջանում կազմակերպվող հարցումների միջոցով, ինչպես նաև ուսումնամեթոդական հիմքի գնահատումով, որը ենթադրում է հետևյալ բաղադրիչները. ծրագրային փաթեթի առկայություն, մատենավարություն, ուսուցման ձևերի և մեթոդների կիրառում, դասի տեսակի ընտրման նպատակահարմարության գնահատում, տեսական մասիի և պրակտիկայի կապի ապահովում, ներառարկայական և միջառարկայական կապերի հաստատում և այլն:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ըստ կարգի դասախոսական կազմի գնահատում քոլեջում իրականացվում է հիմնականում դասալսումների արդյունքում: Քոլեջն ունի «Դասալսումների կարգ», որով նախատեսված են պլանավորած և չպլանավորած դասալսումները: Պլանավորած դասալսումները կազմակերպվում են ամբիոնների կողմից կիսամյակի սկզբում հաստատված ժամանակացույցով յուրաքանչյուր դասախոսի մոտ նվազագույնը մեկ անգամ կիսամյակում ամբիոնի վարիչի կամ հանձնաժողովի կողմից: Դասալսումների իրականացման համար նախատեսված է առանձին ձևաթերթ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասալսումների արդյունքները քննարկվում են ամբիոնների նիստերում դասախոսների հետ, ինչպես նաև ամբիոնի վարիչը դասալսումների վերաբերյալ հաշվետվություններ է ներկայացնում ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներքոլեջային փորձի փոխանակման միջոցառումները հստակ պլանավորված և կանոնակարգված չեն:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ամբիոնների վարիչների և ուսումնական գծով փոխտնօրենի պլաններում առկա է սկսնակ դասախոսների հետ տարվող աշխատանքների գործառույթը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ սկսնակ դասախոսներին քոլեջի կողմից տրամադրվում է աջակցություն մատենավարության իրականացման, ծրագրային փաթեթների մշակման ուղղությամբ, ինչպես նաև ամբիոնների վարիչները խորհրդատվություն են տրամադրում դասավանդման և գնահատման մեթոդների վերաբերյալ:

Քոլեջի նախահաշվի և բյուջեի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ քոլեջը ֆինանսական միջոցներ չի հատկացրել դասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստումների համար: Քոլեջի դասախոսները պարբերաբար մասնակցում են ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից իրականացված մեթոդական վերապատրաստումներին: Վերջին չորս տարիներին ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից իրականացված մեթոդական վերապատրաստումներին մասնակցել են քոլեջի մոտ ութսուն դասախոսներ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ արտաքին շահակիցների ներգրավմամբ քոլեջում իրականացվում են վարպետաց դասեր, որոնց մասնակցում են նաև քոլեջի դասախոսները:

Դասախոսական կազմի խրախուսման չափանիշներ քոլեջի կողմից չեն սահմանվել: Այսուհանդերձ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ մասնագիտական աշխատանքը որակյալ կատարելու համար դասախոսները ստացել են շնորհակալագրեր, մեդալներ, ինչպես նաև ուսանողներին միջազգային փառատոներին լավագույն ներկայանալու և պատրաստվելու համար արժանացել են միանվագ դրամական խրախուսանքի:

Վերջին տարիներին դասախոսական կազմի թվաքանակի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դասախոսական կազմը հիմնականում կայուն է: Վերջին երեք տարիների տվյալների համադրումը ցույց է տալիս, որ հիմնական դասախոսները միշտ գերակշռում են: Ներկայումս համատեղությամբ աշխատում է դասախոսական կազմի 13,1%-ը:

Քոլեջը կարևորում է դասախոսական կազմի երիտասարդացումը և կայուն սերնդափոխությունը, ինչի նպատակով շարունակաբար համալրում է իր կազմը նոր դասախոսներով: 2023-2024 ուսումնական տարում մինչև 36 տարեկան դասախոսները կազմել են դասախոսական կազմի 29,5 %-ը, 36-ից 60 տարեկանի գոտում գտնվում է 55,7 %-ը, 60 տարեկանից բարձր տարիք ունեցողները կազմում են 14,7 %: Քոլեջում դասավանդողների միջին տարիքը 46 է:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսական կազմի ռեզերվի հավաքագրման անհրաժեշտություն քոլեջը չի տեսնում. թափուր հաստիքի առկայության դեպքում հայտարարվում է մրցույթ թեկնածուների հավաքագրման նպատակով:

Քոլեջի վարչական աշխատակիցների թիվը 9 է, կազմում է աշխատակազմի 6,1%-ը, ՈՒՀՕ անձնակազմի թիվը 25 է, կազմում է աշխատակազմի 16,9 %-ը: ՈՒՀՕ կազմի մեջ ներառված են մեթոդիստները (ուսումնական գործընթացի կազմակերպմանը և Ուսանողական թատրոնի աշխատանքների աջակցման գործառույթ ունեն), գործավարը, գրադարանավարը և այլն:

Քոլեջի հաստիքային վարչական աշխատակիցներ հանդիսացող երեք տնօրենի տեղակալներն իրենց վարչական գործառույթների իրականացմանը զուգընթաց ներգրավված են նաև դասավանդման գործընթացներում:

Ուսումնաօժանդակ և վարչական կազմերի ներկայացուցիչների գործառույթները սահմանվում են աշխատանքային պայմանագրերով և պաշտոնների անձնագրերով:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջն ունի դասախոսական կազմի ընտրության համար սահմանված մեխանիզմներ, ինչը թույլ է տալիս ներգրավել կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ որակավորում ու փորձառություն ունեցող դասախոսներ: Այնուամենայնիվ, որոշ մասնագիտություններում մեկ դասախոսի կողմից մեծաթիվ մոդուլների դասավանդումը վկայում է լրացուցիչ մասնագետների անհրաժեշտության մասին: Փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջը կարող է ավելացնել համագործակցությունն աշխատաշուկայի և այլ կրթական հաստատությունների հետ, ինչը թույլ կտա արդյունավետորեն լրացնել թափուր հաստիքները և ապահովել բոլոր մասնագիտությունների համար բարձր որակավորում ունեցող դասախոսներ: Խումբը նշում է նաև, որ քոլեջը կարող է զարգացնել գործընկերությունը շրջանավարտների և գործատուների հետ՝ նրանց ներգրավելով ոչ միայն

դասավանդման, այլև կրթական ծրագրերի վերանայման գործընթացում, ինչը թույլ կտա ավելացնել ՌԾ-ով կարևորված ուսուցման գործնական բաղադրիչը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջում ներդրված են դասախոսական կազմի գնահատման մեխանիզմներ, ինչը հնարավորություն է տալիս պարբերաբար հետևել դասախոսական կազմի գործունեության արդյունավետությանը: Այնուամենայնիվ, գնահատման արդյունքների արդյունավետ կիրառման և ներքին լավ փորձի տարածման պլանավորված ու կանոնակարգված միջոցառումների իրականացումը կնպաստի դասախոսների մասնագիտական աճին և դասախոսների համագործակցության ամրապնդմանը:

Խումբը նաև գնահատում է սկսնակ դասախոսներին տրամադրվող աջակցությունը, որը ներառում է խորհրդատվություններ և ծրագրային փաթեթների մշակման աջակցություն: Սակայն այս աջակցությունը կդառնա ավելի արդյունավետ, եթե այն զուգակցվի պլանավորված վերապատրաստումների և հմտությունների զարգացման ծրագրերով: Այս նպատակով դասախոսական կազմի վերապատրաստումների համար բյուջեում համապատասխան ֆինանսական միջոցների նախատեսումը հնարավորություն կտա ապահովելու դասախոսների մասնագիտական զարգացումը և նրանց հմտությունների կատարելագործումը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ արտաքին շահակիցների ներգրավմամբ իրականացվող վարպետաց դասերը նպաստում են դասախոսների մասնագիտական զարգացմանը: Գործատուների հետ համագործակցությամբ ու նրանց ներգրավմամբ նման միջոցառումների պարբերական իրականացումը կօգնեն դասախոսական կազմի մասնագիտական կատարելագործմանը և ուսուցման գործնական բաղադրիչի զարգացմանը՝ ապահովելով, որ կրթական ծրագրերը համապատասխանեն ժամանակակից պահանջներին և արտացոլեն ոլորտում տեղի ունեցող ժամանակակից նորարարությունները:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջում առկա են դասախոսական կազմի խրախուսման որոշ մեխանիզմներ, այնուհանդերձ դրանց արդյունավետության բարձրացման նպատակով հստակ չափանիշների սահմանումը կարևոր է համակարգային կիրառման և դասախոսական կազմի մոտիվացիայի բարձրացման համար:

Փորձագիտական խումբը կարևորում է նաև դասախոսների երիտասարդացման ու սերնդափոխության ուղղությամբ կատարված աշխատանքների իրականացումը, ինչը հնարավորություն է տալիս անխոչընդոտ իրականացնել ուսուցման գործընթացը: Դասախոսական կազմի ռեզերվի ձևավորումը ևս մեկ քայլ կարող է լինել քոլեջի երկարաժամկետ կայուն զարգացման տեսանկյունից:

Դրական է, որ քոլեջն ունի բավարար վարչական և ուսումնաօժանդակ կազմ կրթական ծրագրրեի իրականացման նպատակով: Այս համատեքստում փորձագիտական խումբը կարևորում է նաև աշխատակազմի վերապատրաստումների հնարավորությունների ընդլայնումը կրթական գործընթացների ավելի ճկուն և արդյունավետ կառավարման նպատակով:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջն իր կրթական ծրագրերի իրականացման համար ունի համապատասխան որակավորում ունեցող դասախոսական կազմ, առկա են դասախոսական կազմի գնահատման մեխանիզմներ, քայլեր է ձեռնարկում սկսնակ դասախոսների զարգացման ու

դասախոսական կազմի երիտասարդացման ուղղությամբ, ունի համապատասխան վարչական և ուսումնաօժանդակ կազմ կրթական ծրագրերի իրականացումն ապահովելու համար՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 5-ի պահանջները:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

Հետազոտության զարգացումը քոլեջի ռազմավարական առաջնահերթություններից չի դիտարկվում: ՄՈՒՀ-ում 2024 թ. հաստատվել է «Հետազոտության, ստեղծագործական և վերլուծական աշխատանքների քաղաքականությունը»: Փաստաթղթում սահմանված են հետազոտական, ստեղծագործական և վերլուծական աշխատանքների իրականացման սկզբունքներն ու հետազոտական որոշ ուղղություններ: Օրինակ՝ «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտության շրջանակներում ամբիոնային քննարկումների արդյունքում հավանության է արժանացել հետազոտական ավարտական աշխատանքների «Հայկական տարազ» թեմատիկ ուղղվածությունը:

2023-2024 ուսումնական տարում քննարկումների արդյունքում «Արվեստի ստեղծագործությունների վերականգնում, կոնսերվացում և պահպանում» մասնագիտության շրջանակներում ավարտական աշխատանքների համար որպես ուղղություն սահմանվել է 18-19-րդ դարերում Աստվածաշնչյան թեմատիկ աշխատանքների կրկնօրինակումը:

Դասալսումներն ու փորձագիտական հանդիպումները ցույց տվեցին, որ ՄՈՒՀ-ում հետազոտական աշխատանքը ներառված է մասնագիտական մոդուլներում և դրված է ստեղծագործական գործունեության հիմքում: Սակայն սահմանված չեն այդ աշխատանքների իրականացման մեթոդական ցուցումները, անհատական աշխատանքների ներկայացման կարգը, ինչպես նաև ուսանողների հետազոտական-վերլուծական գործունեության ձևերն ու չափանիշները՝ համապատասխան Որակավորումների ազգային շրջանակի 5-րդ մակարդակի բնութագրիչներին:

Հարկ է նշել, որ քոլեջի հետազոտական աշխատանքների ընթացիկ իրականացումը և վերահսկողությունը կատարվում է ամբիոնների վարիչների և ուսումնական մասի կողմից:

Կրթական ծրագրերի ուսումնասիրությունը և մասնագիտական հանդիպումները ցույց տվեցին, որ ուսանողներին տրամադրվում են վերլուծական, հետազոտական և ստեղծագործական առաջադրանքներ: Ուսանողներն իրականացնում են դիպլոմային աշխատանքներ, ռեֆերատներ, դասախոսները հանձնարարում են ինքնուրույն աշխատանքներ: Այսուհանդերձ, այդ առաջադրանքները համակարգված ձևով ներկայացված չեն կրթական ծրագրերի փաթեթներում:

Քոլեջում ավարտական աշխատանքների իրականացումը նախատեսված է «Հագուստի մոդելավորում և նախագծում», «Ռեժիսուրա», «Էստրադային արվեստ», «Լուսանկարչական գործ», «Դերասանական արվեստ», «Արվեստի ստեղծագործությունների վերականգնում, կոնսերվացում և պահպանում» մասնագիտությունների շրջանակներում: Ավարտական աշխատանքների թեմաներն ուսանողներն ընտրում են, քննարկում ղեկավարների հետ և ներկայացնում մասնագիտական ամբիոններում:

Մասնագիտական հանդիպումներից և ավարտական աշխատանքների ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ օրինակ «Դերասանական արվեստ» կրթական ծրագրի շրջանակներում՝ որպես ավարտական աշխատանք, ուսանողները ղեկավարի հետ իրականացնում են մեկ սցենարի մշակում, որից հետո բեմադրվում է ներկայացում: Ներկայացման ավարտից հետո յուրաքանչյուր ուսանող կատարում է կերպարների ներկայացում և վերլուծություն:

«Հագուստի մոդելավորում և նախագծում» կրթական ծրագրի շրջանակներում՝ որպես ավարտական աշխատանք, ուսանողները մինչ 2024-2025 ուսումնական տարին ներկայացրել են ազգային տարազի ուսումնասիրություն, էսքիզավորում և նախագծում, սակայն 2024-2025 ուսումնական տարում թեմաների ընտրությունը «Հայկական տարազ» թեմատիկ ուղղվածության շրջանակներում չէ: Ուսանողները ղեկավարների հետ համատեղ ընտրել են թեմաները՝ հաշվի առնելով նաև իրենց նախընտրությունները: Դրանքն ներառում են տարբեր լեգենդների, ավանդապատումների ուսումնասիրություն և այլն:

«Արվեստի ստեղծագործությունների վերականգնում, կոնսերվացում և պահպանում» կրթական ծրագրի շրջանակներում՝ որպես ավարտական աշխատանք, ուսանողները կրկօրինակում են արվեստի գեղանկարչության տեսակի նշանավոր աշխատանքներ՝ ուսումնասիրելով հեղինակի ստեղծագործական կյանքը, նկարչական տեխնիկան և վրձնահարվածները: Քոլեջը ներկայումս դիտարկում է նաև ստեղծագործությունների վերականգնմանն ուղղված գործնական աշխատանքների ներառումն ամփոփիչ ատեստավորման շրջանակներում:

Փորձագիտական այցից և ավարտական աշխատանքների ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ դրանց իրականացման համար սահմանված են պահանջներ, սակայն նման աշխատանքների կատարման չափանիշները ամբողջովին պահպանված չեն և տարբեր կերպով են իրականացված՝ ներառյալ ուսումնասիրությունները, եզրահանգումները և աղբյուրների հիշատակումը:

Փաստաթղթերի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հետազոտության տարրեր են պարունակում նաև տարբեր մոդուլների շրջանակներում ուսանողներին հանձնարարվող ռեֆերատները և ինքնուրույն աշխատանքները: Ռեֆերատային աշխատանքների դիտարկումներից պարզ դարձավ, որ դրանք հիմնականում տեսական նյութի (օրինակ՝ ստեղծագործողի կենսագրություն) ուսումնասիրություն են՝ թույլ արտահայտված հետազոտական բաղադրիչով:

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ում դասավանդող հիմնական դասախոսական կազմի 16 դասախոսներ ունեն գիտական աստիճան, տպագրված հոդվածներ և ձեռնարկներ: Վերջին տարիների հրապարակումներից են՝ «Հայ կոմպոզիտորների վոկալիզներ» և «Հայ կոմպոզիտորների օպերաներից» (հեղինակ՝ Ա. Բազինյան), «Խաղի իբրև պատերազմի մոդելավորման հարացույցն ըստ Յոհան Հայզինգայի աշխատությունների» (հեղինակ՝ Գ. Մուրադյան), «Մաթեմատիկան դպրոցում» (հեղինակ՝ Է. Ստեփանյան):

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ այդ աշխատանքները ոչ միշտ են ներառվում որպես ուսումնասիրության աղբյուր կրթական ծրագրերի գրականության ցանկում կամ դառնում ուսումնառության նյութ։

«Դերասանական արվեստ» մասնագիտությամբ դասավանդող դասախոսները ուսանողների հետ համատեղ իրականացնում են սցենարների մշակում և բեմադրություններ։ Այսպես օրինակ՝ ուսումնասիրվել է Մուշեղ Իշխանի «Կիլիկիո արքան» ներկայացումը, մշակվել է նոր վերջաբան, և իրականացվել բեմադրություն։

Հարկ է նշել, որ դասախոսական կազմի շրջանում միջազգային հետազոտությունների ուսումնասիրությունը լայնորեն չի կիրառվում, իսկ դրանց ներառումը գրականության ցանկերում դեռևս սահմանված չէ որպես առաջնահերթություն։ Քոլեջում բացակայում են դասախոսական կազմի՝ հետազոտական գործունեության խթանման և խրախուսման ընթացակարգերը։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը մշակել է «Հետազոտության, ստեղծագործական և վերլուծական աշխատանքների քաղաքականությունը», ինչը պետք է դարձնել հետազոտական գործունեության զարգացման հիմնական առանցք։ Դրական է, որ ուսանողներին տրվում են վերլուծական և ստեղծագործական առաջադրանքներ, որոնք նպաստում են նրանց հետազոտական կարողությունների ձևավորմանը։ Մինչդեռ, այդ աշխատանքների առավել համակարգված և արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է կրթական ծրագրերում հստակեցնել հետազոտական գործունեության ձևերն ու չափանիշները, սահմանել աշխատանքի ներկայացման և գնահատման միասնական կարգ։ Դա թույլ կտա բացառել տարբերակված մոտեցումները և երաշխավորել ակադեմիական ազնվության կանոնների պահպանումը։

Դրական է նաև, որ որոշ կրթական ծրագրերում համատեղվում են գործնական և հետազոտական բաղադրիչները, ինչն ուսանողներին տալիս է հնարավորություն զարգացնելու ինչպես վերլուծական, այնպես էլ պրակտիկ հմտություններ։ Միևնույն ժամանակ, նման ուղղությունները պետք է համակարգված արտացոլվեն բոլոր կրթական ծրագրերում, իսկ դրանց ամփոփիչ արդյունքների գնահատումը պետք է իրականացվի միասնական չափանիշների հիման վրա։

Քոլեջի դասախոսական կազմի հետազոտական ներուժը կարող է մեծապես նպաստել այս գործընթացին, եթե դասախոսների հրապարակումները և արդյունքները ներառվեն կրթական ծրագրերի գրականության ցանկերում և դասապրոցեսում։ Այդպիսով, ուսանողները կուսումնասիրեն տեղական և միջազգային հետազոտական փորձը, կօգտվեն անհրաժեշտ աղբյուրներից իրենց ուսումնասիրություններն ու վերլուծական աշխատանքներն իրականացնելիս։

Փորձագիտական խումբը գտնում է, որ դասախոսների հետազոտական գործունեության խրախուսումը (օրինակ՝ որոշ հավելավճարների մեխանիզմների կամ հրապարակումների պատրաստման աջակցության միջոցով) թույլ կտա ձևավորել հետազոտական մշակույթ, որն իր հերթին կամրապնդի կրթական ծրագրերի որակն ու կիրառական նշանակությունը։ Այս ամենը կնպաստի, որ քոլեջի ուսանողներն ու դասախոսները ներգրավվեն շարունակական ուսումնամեթոդական բարելավման գործընթացում՝ ապահովելով հետազոտության և ուսումնառության ամուր փոխկապակցվածությունը։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում իրականացվող ստեղծագործական աշխատանքների հիմքում դրված է հետազոտական բաղադրիչը, ուսանողներին տրվում են վերլուծական բնույթ ունեցող առաջադրանքներ, ավարտական աշխատանքների իրականացման շրջանակներում ուսանողներն իրականացնում են վերլուծություններ, առկա են դասախոսական կազմի և ուսանողների մասնակցությամբ համատեղ իրականացված վերլուծական, ստեղծագործական բնույթի աշխատանքների օրինակներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 6-ի պահանջները:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

Քոլեջն իր 2021-2026թթ. ՌԾ-ում խնդիր է սահմանել համալրել և արդիականացնել նյութատեխնիկական ռեսուրսները: Խնդրի իրագործման համար որպես միջոցառումներ ՄՈՒՀ-ը նախատեսել է իրականացնել նյութատեխնիկական բազայի արդիականացման գործընթաց՝ գնահատելով նյութատեխնիկական ռեսուրսների առկա վիճակը, իրականացնել լսարանների, մասնագիտացված կաբինետների, լաբորատորիաների վերանորոգման ու կահավորման գործընթացներ, պարբերաբար արդիականացնել տեխնիկական և տեղեկատվական միջոցները, իսկ ֆինանսական կայունության տեսանկյունից՝ մշակել ֆինանսական հավելյալ աղբյուրների ներգրավման մեխանիզմներ:

Քոլեջն ունի 5100մ^2 ընդհանուր մակերեսով տարածք, որտեղ տեղեկայված են 34 լսարան, որոնցից 13-ը առարկայական դասասենյակներ են, 12-ը՝ մասնագիտական լսարաններ, 8-ը՝ լաբորատոր լսարաններ և 1-ը՝ արվեստանոց, մեկ դահլիճ:

Համակարգչային լսարանները 2-ն են, որոնք հագեցված են 26 համակարգիչներով: 2022թ.-ին «Ազնավուր հիմնադրամ»-ի աջակցությամբ համակարգչային լսարաններից մեկը համալրվել է համակարգիչներով, «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտության համար հիմնադրամը նվիրաբերել է 6 ունիվերսալ կարի մեքենաներ, ինչպես նաև այլ 200 ուսանողի համար նախատեսված սեղան-աթոռներ:

Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ վերջին երեք տարիների ընթացքում «Գործիքային կատարողական արվեստ» և «Լուսանկարչական գործ» մասնագիտությունների համար ձեռք են բերվել 2 հարվածային գործիքներ, 2 էլեկտրոնային դաշնամուր, 1 փողային երաժշտական գործիք, լուսանկարչական ֆոն, տեսախցիկ, 10 բեմական լույսեր և այլ անհրաժեշտ պարագաներ:

Վերջին երկու տարիներին քոլեջն իր միջոցների և «Ազնավուր հիմնադրամ»-ի աջակցության շնորհիվ իրականացրել է նորոգման աշխատանքներ. վերանորոգվել են սանհանգույցները և լսարանները, կոսմետիկ հարդարվել են միջանցքները, փոխվել են բոլոր սենյակների դռները:

Քոլեջը 2021թ.-ին կնքել է համագործակցության համաձայնագիր Մարսել քաղաքի Խաչատուր Աբովյանի անվան հայկական վարժարանի հետ: Համագործակցության շրջանակներում հիմնանորոգվել է քոլեջի միջոցառումների դահլիճը:

Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ հաստատությունը չունի սպորտդահլիճ: ՄՈՒՀ-ը յուրաքանչյուր ուսումնական տարի պայմանագիր է կնքում «Շենգավիթի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի հետ սպորտդահլիճը վարձակալելու նպատակով, որտեղ անցկացվում են ֆիզիկական կուլտուրայի դասաժամերը:

Քոլեջը մշակել է հիմնանորոգման նախագիծ, նախագծանախահաշվարկային աշխատանքներն ավարտվել են: Հիմնանորոգման արդյունքում քոլեջը կունենա տեսական, գործնական և լաբորատոր ուսուցման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով հագեցած լսարաններ: Նախագծում ներառված են նաև մարզադահլիճի և մարզահիրապարակի կառուցումը: Սակայն այս աշխատանքներին մեկնարկ չի տրվել տարածքային խնդիրների պատճառով:

Քոլեջն ունի գրադարան, որը համալրված է շուրջ 4920 միավոր գրականությամբ, այդ թվում՝ դասագրքեր, գրքեր, մասնագիտական գրականություն: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ գրադարանում համալրումներն իրականացվում են հիմնականում նվիրատվությունների շնորհիվ: Առանձին բյուջե գրադարանի համալրման համար նախատեսված չէ:

Քոլեջի գրադարանը թվայնացված չէ, էլեկտրոնային գրականության հասանելիություն ևս գրադարանը չունի: Հաստատությանը ՀՊՄՀ-ը, ԵՊԿ-ն՝ կնքված համագործակցության հուշագրերի շրջանակներում, տրամադրել են իրենց թվայնացված գրադարանային բազան:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գործնական պարապմունքների, պրակտիկաների իրականացման համար քոլեջն օգտագործում է նաև գործընկեր կազմակերպությունների ռեսուրսները: «Արվեստի ստեղծագործությունների վերականգնում, կոնսերվացում և պահպանում» մասնագիտության որոշ գործնական պարապմունքներ և պրակտիկաներ անցկացվել են Մատենադարանում, «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան» ՀՈԱԿ-ում, որտեղ ուսանողները ծանոթանում են նաև մասնագիտական նյութերի և դրանց կիրառման տարբեր տեխնիկաների հետ:

«Դերասանական արվեստ» մասնագիտության շրջանակներում քոլեջն ունի համագործակցության և պրակտիների կազմակերպման հուշագրեր «Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոն»-ի, «Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական պետական դրամատիկական թատրոն»-ի հետ, որտեղ ուսանողներն անկացնում են մասնագիտական պրակտիկաները, ինչպես նաև բեմադրության փորձերը: «Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ» մասնագիտության մասնագիտական մոդուլների որոշ մասն իրականացվում է «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոնում:

2024թ.-ին քոլեջի բյուջեի եկամուտների 73.77%-ը կազմել են պետական ֆինանսավորումից մուտքերը, իսկ 26.23%-ը՝ ուսանողների վարձավճարներից մուտքերը:

Քոլեջի եկամուտների և ծախսերի վերլուծության համաձայն՝ 2024թ. կտրվածքով ընդհանուր ծախսերի 88.01%-ը բաժին է ընկնում աշխատավարձի ֆոնդին, 7.03%-ը ծառայությունների և ռեսուրսների ձեռքբերմանը, սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման համար 1.67%, այլ ծախսեր՝ 3.29%:

Ըստ 2023-2024թթ. բյուջեի բաշխման տվյալների՝ դասախոսների վերապատրաստման իրականացման, հետազոտական աշխատանքների համար քոլեջը դրամական հատկացումներ չի տրամադրել:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դրամաշնորհային ծրագրերի մասնակցության արդյունքում ստացվող եկամուտների նախադեպեր քոլեջում առկա չեն: Հաշվետու ժամանակահատվածում քոլեջը չի իրականացրել ֆինանսական այլընտրանքային հոսք ապահովող կարճաժամկետ ծրագրեր:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը հաշվարկել է իր մասնագիտությունների հիմնական ուղղվածության շրջանակից՝ մշակույթից ու արվեստից դուրս գտնվող «Հաշվապահական հաշվառում» կրթական ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները, դիտարկել դրա ծախսարդյունավետությունը և որոշել շարունակել իրականացնել այն՝ հաշվի առնելով, որ ծրագրից ստացվող եկամուտները բավարար են դրա իրականացումն ապահովելու համար և չեն խոչընդոտում այլ կրթական ծրագրերի իրականացումը:

Վերջին տարիներին արձանագրվել է ուսման վարձի փոփոխություն՝ նախորդ տարիների 250-300 հազարի փոխարեն 2023-2024 ուսումնական տարում բոլոր մասնագիտությունների համար սահմանվել է տարեկան 350 հազար դրամ վարձավճար:

Քոլեջն արտաքին շահակիցների հետ հաղորդակցումն ապահովում է էլեկտրոնային փոստի միջոցով: Ներքին փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է էլեկտրոնային փոստի միջոցով և թղթային տարբերակով: Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության միասնական համակարգ քոլեջում ներդրված չէ: Արտաքին փաստաթղթաշրջանառության համար կիրառվում է «Mulberry» համակարգը:

Անդրադառնալով անվտանգային միջավայրին՝ հարկ է նշել, որ քոլեջը 2024թ.-ից ունի բուժքույր, սակայն տարածքի սղությամբ պայմանավորված բուժկետ դեռևս առկա չէ: Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ քոլեջում տեղադրված է քարտային անցակետ: Հաստատությունն ունի հակահրդեհային համակարգ, կրակմարիչներ, պահակակետ, տեղադրված են տեսանկարահանող սարքավորումներ, բոլոր հարկերում առկա են տարհանման պլաններ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջն ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 9 ուսանող, որոնց ինտեգրում է կրթական միջավայրում: Հաստատությունում բացակայում են թեքահարթակները:

Հարկ է նշել, որ ուսանողները մասնագիտական գործունեություն ծավալելիս անվտանգության կանոնների պահպանմանը (օրինակ՝ կարի մեքենաների և նյութերի հետ աշխատելիս անվտանգ գործունեության ապահովման կանոններ) հիմնականում ծանոթանում են գործատուների միջավայրում իրականացվող գործնական պարապմունքների և պրակտիկաների ընթացքում ստացած ցուցումների միջոցով:

2024թ.-ին քոլեջն իրականացրել է ռեսուրսներից բավարարվածության հարցումներ դասախոսների և ուսանողների շրջանում, որոնց արդյունքում պարզվել է, որ ուսանողներն ու դասախոսները հիմնականում բավարար են համարում առկա նյութատեխնիկական բազան, սակայն նշում են դրանց վերազինման և արդիականացման անհրաժեշտությունը: Ուսանողների և դասախոսների առաջարկությունները հիմնականում վերաբերել են համակարգչային ռեսուրսների համալրմանն ու արդիականացմանը, ինչպես նաև քոլեջում բուֆետի և փակ մարզադահլիճի կառուցման անհրաժեշտությանը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջն ունի համապատասխան նյութատեխնիկական բազա, որը հնարավորություն է տալիս կազմակերպել կրթական ծրագրերը և ապահովել սահմանված վերջնարդյունքների ձեռքբերումը: Դրական հանգամանք է քոլեջի կողմից գործատուների հետ համատեղ ռեսուրսների կիրառումը, ինչը հնարավորություն է տալիս պրակտիկ դասընթացները կազմակերպել գործատուի միջավայրում և նպաստում գործնական կարողությունների ձևավորմանը:

Քոլեջը վերջին տարիներին ձեռնարկել է նյութատեխնիկական բազայի վերազինման և արդիականացման բազմաթիվ քայլեր: Սա հաստատում է, որ ինստիտուցիոնալ մակարդակով տեղի են ունենում բարելավումներ, որոնք ուղղված են ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացմանը: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը կարևորում է ռեսուրսների համալրման գործընթացն իրականացնել կարիքների շարունակական գնահատման հիման վրա, ինչը կօգնի ավելի լավ պատկերացնել կրթական ծրագրերի համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի անհրաժեշտությունը և թույլ կտա դրա բարելավումը՝ նպաստելով բոլոր կրթական ծրագրերի համաչափ զարգացմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ հավելյալ ֆինանսական աղբյուրների ներգրավման մեխանիզմների ներդրումը նույնպես կարևոր է քոլեջում նոր նախագծերի իրականացման և կարճաժամկետ ծրագրերի կազմակերպման համար: Դրանք կարող են ապահովել լրացուցիչ ֆինանսական հոսքեր, ինչը կնպաստի ոչ միայն նյութատեխնիկական բազայի կատարելագործմանը, այլ նաև նոր նախագծերի, հետազոտությունների իրականացմանը:

Քոլեջի թվայնացված գրադարանային բազան ընդլայնելու անհրաժեշտությունը ևս ուշադրության արժանի է: Փորձագիտական խումբը շեշտադրում է այս ուղղությամբ աշխատանքների իրականացման անհրաժեշտությունը՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությունն ապահովելու համար:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի ջանքերն ապահովելու հավասար հնարավորություններ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների համար: Փորձագիտական խումբը նշում է նաև գործնական պարապմունքների իրականացման ընթացքում անվտանգության կանոններին առավել շատ ուշադրություն դարձնելու կարևորությունը ուսանողների անվտանգ կենսագործունեության ապահովման տեսանկյունից:

Փորձագիտական խումբը կարևորում է ռեսուրսների առկայության և հասանելիության գնահատման մեխանիզմների պարբերական կիրառումը, ինչը հնարավորություն կտա վերհանելու շահակիցների կարիքները և բարձրացնելու ռեսուրսների կիրառելիության արդյունավետությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջն իր միջոցներով ու «Ազնավուր» հիմնադրամի հետ համագործակցությամբ շարունակաբար համալրում է իր ռեսուրսները, հաջողությամբ կիրառում է գործատուների ռեսուրսները գործնական պարապմունքների ու պրակտիկաների կազմակերպման նպատակով, ունի նվազագույն պայմանները կրթական ծրագրերի իրականացման համար, ունի փաստաթղթաշրջանառության ներքին համակարգ, հատուկ ուշադրության կենտրոնում է պահում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների համար հնարավորությունների ստեղծումը, իրականացնում է ռեսուրսներից ուսանողների բավարարվածության գնահատում և հնարավորությունների սահմանում բարելավում իր ենթակառուցվածքները՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 7-ի պահանջները:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջում առկա է հաշվետվողականության ներքևից վերև համակարգ: Քոլեջի ստորաբաժանումներն իրենց կատարած աշխատանքների վերաբերյալ կիսամյակային և տարեկան կտրվածքով ներկայացնում են հաշվետվություններ կազմակերպական կառուցվածքով սահմանված իրենց վերադասին: Իրականացված աշխատանքների արդյունքները քննարկվում են մանկավարժական խորհրդի նիստերին: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հաշվետվությունները որոշ դեպքերում նկարագրողական բնույթ ունեն, վերլուծական բաղադրիչը հաշվետվություններում թույլ է արտահայտված: Տնօրենը հաշվետու է Կառավարման խորհրդին. նրա կողմից ներկայացված աշխատանքների արդյունքներն ամփոփվում են խորհրդի նիստերի արձանագրություններում:

Քոլեջն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը՝ որպես տեղեկատվական հարթակներ օգտագործելով ֆեյսբուքյան հարթակը, պաշտոնական կայքէջը, յութուբյան ալիքը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի ֆեյսբուքյան էջի և կայքէջի աշխատանքները վարում է կարիերայի պատասխանատուն:

Հաշվետվողականություն ապահովող միջոց է ֆեյսբուքյան էջը, որի միջոցով պարբերաբար լուսաբանվում են քոլեջի միջոցառումները, ուսանողների ելույթները, մասնակցությունները տարբեր միջազգային փառատոններին, մրցույթներին, համերգային ծրագրերին, շրջանավարտների հաջողությունները: Ֆեյսբուքյան էջում լուսաբանվում են նաև հատվածներ ուսանողական պրակտիկաներից, քոլեջում կազմակերպվող վարպետաց դասերից, գործնական դասերից:

Տեղեկատվության տրամադրման հարթակներում տեղեկատվության հրապարակումն ու դրանց որակական վերլուծությունն իրականացվում է Կարիերայի պատասխանատուի կողմից:

Քոլեջի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության և թափանցիկության ապահովման հարթակ է 2018 թվականից գործող պաշտոնական կայքէջը: Թեև կայքէջը նախատեսված է քառալեզու, սակայն օտար լեզուներով տեղեկատվությունը դեռևս ամբողջական թարմացված չէ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կայքէջը վերազինման փուլում է: Պաշտոնական կայքէջում զետեղված են քոլեջի կանոնադրությունը, ռազմավարական ծրագիրը, կանոնակարգերը, ընթացակարգերը, հայտարարությունները, քոլեջի գործունեությունը կարգավորող այլ իրավական ակտեր, միջոցառումների վերաբերյալ տեսանյութեր: Կայքէջում անդրադարձ է կատարվում նաև կնքված հուշագրերին տեսանյութերի և հրապարակումների միջոցով: Պաշտոնական կայքէջը ներառում է նաև տեղակատվություն քոլեջում գործող բաժինների, աշխատակազմի, գործընկերների մասին: «Դիմորդ» բաժնում ներկայացված են մասնագիտությունները, ընդունելության պայմանները, սակայն կրթական ծրագրերի մասին համապարփակ տեղեկատվություն առկա չէ: Քոլեջի սոցիալական հարթակներում և պաշտոնական կայքէջում լուսաբանվող միջոցառումները նկարահանվում և մոնտաժվում են քոլեջի «Լուսանկարչական գործ» և «Ռեժիսուրա» մասնագիտության ուսանողների կողմից:

Հասարակության հետ հետադարձ կապի ապահովման համար քոլեջը կիրառում է սոցիալական հարթակները, պաշտոնական կայքէջը, պաշտոնական էլեկտրոնային փոստը: Կայքէջն ունի «Հետադարձ կապ» բաժինը:

Հասարակության հետ հետադարձ կապի հաստատման միջոցների ուսումնասիրությունից և փորձագիտական այցի ընթացքում շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ քոլեջը մշտապես կապ է պահում արտաքին շահակիցների հետ տնօրենի և կարիերայի պատասխանատուի միջոցով: Արտաքին համագործակցությունների շրջանակներում քոլեջում պարբերաբար վարպետաց դասեր են կազմակերպվում ոլորտում մեծ ավանդ և փորձ ունեցող մասնագետների կողմից:

Քոլեջի կողմից իրականացվում են հասարակությանն արժեքների փոխանցմանը միտված որոշակի միջոցառումներ: Մասնավորապես, 2022 թվականից քոլեջում գործում է Ուսանողական թատրոն: Համաձայն «Ուսանողական թատրոնի կանոնակարգ»-ի՝ թատրոնի նպատակը ուսանողության, երիտասարդության գեղագիտական դաստիարակության կատարելագործումը, ստեղծագործական հնարավորությունների իրացումը, ինչպես նաև ուսանողության համար բարոյական, մշակութային, պատմական ավանդույթների զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումն է, ուսանողների ընդգրկվածությունը հասարակական նշանակության միջոցառումներին: Ուսանողական թատրոնը ներկայացումներով, բարեգործական համերգներով հանդես է գալիս Հանրապետության տարբեր շրջաններում:

Քոլեջի ուսանողները նաև մասնակցում են միջազգային և հանրապետական մրցույթների, մշակութային տարաբնույթ միջոցառումների, ինչպես նաև տարբեր համերգային ծրագրերով, հյուրախաղերով, ելույթներով հանդես են գալիս մշակութային հաստատություններում, թանգարաններում և այլն: «Դերասանական արվեստ» մասնագիտության ուսանողները ներկայացումները ցուցադրում են նաև դպրոցներում, ինչպես նաև քոլեջում կազմակերպվող մանսագիտական ամփոփիչ հանձնումները բաց են արտաքին շահակիցների համար:

Ինքնավերլուծության համաձայն՝ քոլեջի դասախոսական կազմը 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում դպրոցների հետ համագործակցության շրջանակներում վարպետության դասեր է անցկացրել մարզային, երևանյան և արտերկրի հանրակրթական դպրոցներում: Հանրակրթական ուսումնական հաստատությունների համար վարպետության դասեր են կազմակերպվում նաև մասնագիտական կողմնորոշման նպատակով դպրոցներ կատարվող շրջայցերի շրջանակում: Շրջայցի շրջանակներում աշակերտները նաև հնարավորություն ունեն դիտելու Ուսանողական թատրոնի ներկայացումները, «Արվեստի ամբիոնի» կողմից կազմակերպած տարբեր ցուցահանդեսները, համերգային ծրագրերը և այլն:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում հաշվետվողականության սահմանված կարգի առկայությունը քոլեջում, ինչպես նաև բոլոր գործընթացների վերաբերյալ հաշվետվությունների մեկտեղումը մանկավարժական խորհրդում: Դա նպաստում է գործընթացների վերաբերյալ տեղեկատվության տարածմանը ներքին շահակիցների շրջանում: Այդուհանդերձ, փորձագիտական խումբն ընդգծում է հաշվետվություններում վերլուծական բաղադրիչի ավելացման անհրաժեշտությունը, ինչը կնպաստի գործընթացների արդյունավետության գնահատմանը, լավագույն փորձի բացահայտմանը և բարելավման ուղղությունների նախանշմանը:

Դրական է արտաքին շահակիցներին տեղակատվության տրամադրման և հասանելիության տարբեր հարթակների կիրառումը, ինչը նպաստում է գործընթացների և տեղեկատվության թափանցիկությանը հասարակության շրջանում՝ նպաստելով նաև հաստատության ճանաչելիության բարձրացմանը: Այդուհանդերձ, փորձագիտական խումբը կարևորում է նաև հաստատության կառուցվածքային օղակների հաշվետվությունների և կրթական ծրագրերի վերաբերյալ համապարփակ տեղակատվության հասանելիության ապահովումը կիրառվող հարթակների միջոցով: Փորձագիտական խումբը գտնում է, որ դա կնպաստի հաստատության գործընթացների թափանցիկության և արտաքին շահակիցների առջև հաշվետվողականության բարձրացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում հաստատության կողմից հասարակական պատասխանատվության և մշակութային արժեքների պահպանման և զարգացման կարևորումը և այդ նպատակով հասարակությանն արժեքների փոխանցմանը նպաստող միջոցառումների իրականացումը: Այդուհանդերձ, փորձագիտական խումբը շեշտադրում է, որ քոլեջը, օգտագործելով իր ներուժը, կարող է ընդլայնել հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցման մեխանիզմները՝ կազմակերպելով լրացուցիչ դասընթացներ, միջոցառումներ, վերապատրաստումներ: Փորձագիտական խմբի դիտարկմամբ դա կնպաստի հաստատությունում կուտակված լավագույն փորձի և արժեքների փոխանցմանը հասարակությանը՝ այդպիսով նպաստելով նաև հաստատության հասարակական պատասխանատվության բարձրացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջն ունի հաշվետվողականության սահմանված կարգ, պաշտոնական կայքի ու սոցիալական էջերի միջոցով ապահովում է գործընթացների թափանցիկությունը, ապահովում է շահակիցների հետ հետադարձ կապը, իրականացնում է հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցմանը նպաստող միջոցառումներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 8-ի պահանջները:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

Հաստատության ռազմավարական նպատակներից է արտաքին կապերի զարգացումը և միջազգայնացման մակարդակի բարելավումը: Նպատակին հասնելու համար խնդիր է դիտարկվում միջազգայնացման և փորձի փոխանակմանը միտված հստակ միջոցառումների ընդլայնումը: Այս նպատակին հասնելու համար քոլեջը նախատեսել է ակտիվացնել տեղական և միջազգային կրթական կազմակերպությունների հետ ինստիտուցիոնալ համագործակցությունը դասախոսների վերապատրաստման, համատեղ ծրագրերի ու միջոցառումների իրականացման միջոցով, որոնել միջազգային դրամաշնորհային ծրագրեր՝ քոլեջի միջազգային տեսանելիության բարձրացման նպատակով: Նշված նպատակին հասնելու ու միջոցառումներն իրականացնելու ուղղությամբ հստակ քաղաքականություն ու ընթացակարգեր քոլեջը չի մշակել: Ըստ ինքնավերլուծության՝ միջազգայնացման կարևոր ցուցիչ են միջազգային մրցույթներում ուսանողների զբաղեցրած հորիզոնականները:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման ուղղությամբ աշխատանքներ իրականացվում են կարիերայի պատասխանատուի և տնօրենի կողմից:

Քոլեջի ամենամեծ աջակիցը և գործընկերն է «Ազնավուր հիմնադրամ»-ը: Հիմնադրամի հետ համագործակցության շնորհիվ պարբերաբար տեղի է ունենում ռեսուրսների համալրում: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ 2023 թվականին «Աիդա Ազնավուր 100» կրթաթոշակը միանվագ տրամադրվել է 5 տարբեր մասնագիտություններում սովորող լավագույն ուսանողներին:

Հաստատությունը համագործակցում է շուրջ 25 գործընկեր կազմակերպության հետ կրթական ծրագրերի շրջանակներում ուսանողների պրակտիկաների կազմակերպման նպատակով: Քոլեջի ամենախոշոր գործատու-գործընկերներից են թատրոնները (Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոն, Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական պետական դրամատիկական թատրոն և այլն), Ալեքս Տեքստիլը, Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնը, թանգարանները, Հայաստանի Թ. Ալթունյանի անվան երգի-պարի պետական անսամբլը:

Քոլեջը 2024թ.-ին կնքել է միջոլորտային համագործակցության մասին հուշագիր «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոնի հետ: Այս համագործակցությունը հնարավորություն է տալիս «Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ» մասնագիտության գործնական դասընթացները և ուսումնական պրակտիկան իրականացնել բժշկական կենտրոնում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հաստատությունը 2024-2025 ուստարվանից ունի նաև պրակտիկայի պատասխանատու՝ գործընթացը համակարգելու և արդյունավետ կազմակերպելու

համար. մինչ այս պատասխանատվությունն իրականացնում էին տնօրենն ու կարիերայի պատասխանատուն։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ տեղական կազմակերպությունների հետ համագործակցությունը հնարավորություն է տալիս քոլեջին համատեղ օգտագործել գործատուների ռեսուրսները և արտադրական միջավայրը՝ գործնական պարապմունքների ժամանակ։ Որոշ կրթական ծրագրերի պարագայում (օրինակ՝ «Դերասանական արվեստ», «Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ») այս համագործակցությունները հնարավորություն են տալիս ներգրավելու նաև գործատուներին դասավանդման գործընթացում։ Այսուհանդերձ, բոլոր կրթական ծրագրերում գործատու-դասավանդողներ դեռևս ներգրավված չեն։

Հաստատությունը համագործակցում է ՀՀ-ում գործող դպրոցների և քոլեջների հետ՝ կազմակերպելով համատեղ միջոցառումներ, մրցույթներ, փառատոններ, ինչպես նաև փորձի փոխանակմանը նպաստող հանդիպումներ։

Քոլեջի ուսանողներն ակտիվ մասնակցում են միջազգային և տեղական մրցույթներին։ 2021-2024 թվականներին ուսանողները մասնակցել են շուրջ 20 հեղինակավոր միջազգային մրցույթների, ինչպես օրինակ՝ «Սլավյանսկի բազար», «Dali's Mustache» լուսանկարչական մրցույթ, «Դելֆյան խաղեր» փառատոն, «Radient Ray of music» երգի մրցույթ և այլ միջոցառումներ՝ ՌԴ-ում, Մոլդովայում, Բելառուսում և Վրաստանում՝ շահելով գլխավոր մրցանակներ։ Ուսանողները հաջողությամբ հանդես են եկել նաև ՀՀ շուրջ 11 մրցույթներում, այդ թվում՝ «Արմմոնո» թատերական փառատոնում, «Սայաթ-Նովա» աշուղական երգի մրցույթում և Հանրային հեռուստաընկերության «Երգ Երգոց» նախագծում, որտեղ 3 շրջանավարտ և 1 ուսանող ընտրվել են որպես մենակատարներ։

Հաստատությունը կնքել է համագործակցության մասին հուշագրեր Տերնոպոլի ազգային տնտեսագիտական համալսարանի և Մարսելի Աբովյան վարժարանի հետ միասին։ Հուշագրերի հիմնական ուղղություններն են ուսանողների փոխանակումը, համատեղ ծրագրերի իրականացումը և կրթական միջավայրի բարելավումը։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կրթական ծրագրերում փորձի փոխանակման, կրթական ծրագրերի համեմատական վերլուծության դեպքեր և լավագույն փորձի տեղայնացում դեռևս տեղի չի ունեցել։

Անդրադառնալով ներքին շահակիցների՝ օտար լեզուների տիրապետմանը՝ փորձագիտական խումբը նշում է, որ հաստատությունում լեզվի իմացության մակարդակի գնահատում չի իրականացվել։ Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ քոլեջի դասավանդողների զգալի մասը տիրապետում է ռուսերենին։

Ուսանողներն ուսումնասիրում են ռուսերեն և անգլերեն իրենց կրթական ծրագրերի շրջանակներում։ Լրացուցիչ պարապմունքներ օտար լեզվի մակարդակի բարելավման ուղղությամբ չեն իրականացվում։ «Երգեցողություն» մասնագիտության շրջանակներում՝ ըստ կրթական ծրագրի պահանջի, ուսանողներն ուսումնասիրում են նաև իտալերեն։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը, կրելով ֆրանսահայ մեծ շանսոնյե Շառլ Ազնավուրի անունը, քննարկում է ֆրանսերենի ուսուցումը ևս ներառել կրթական ծրագրերում։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջն արտաքին կապերի զարգացումը և միջազգայնացումը ներառել է ռազմավարական նպատակներում, ինչի շնորհիվ

համագործակցում է մեծաթիվ տեղական կազմակերպությունների և մի քանի միջազգային հաստատությունների հետ: Այս համագործակցությունները լայն հնարավորություն են տալիս ուսանողներին պրակտիկ հմտությունների զարգացման, համատեղ ծրագրերի իրականացման և ռեսուրսների փոխանակման համար, իսկ «Ազնավուր» հիմնադրամի աջակցությունը քոլեջին ընձեռում է ռեսուրսների բարելավման շարունակական ներուժ:

Այդուհանդերձ, քոլեջում դեռևս հստակ սահմանված չեն միջազգայնացման և արտաքին կապերի զարգացման քաղաքականությունը ու ընթացակարգերը: Ներգրավվածության ծրագրերն ու շարժունության նախագծերը պլանավորված չեն ամբողջական ու համակարգված կերպով, ինչի հետևանքով միջազգային գործընկերությունների իրականացման դրական արդյունքները սահմանափակ են: Մասնավորապես, գոյություն ունեցող հուշագրերը դեռևս չեն վերածվել կրթական ծրագրերի համեմատական վերլուծության կամ լավագույն փորձի փոխանակման գործընթացների:

Փորձագիտական խումբը կարևորում է նաև գործատուների ակտիվ ներգրավումը թե՛ պրակտիկաների կազմակերպման, թե՛ դասավանդման գործընթացներում: Այս պրակտիկան թույլ է տալիս ուսանողներին ձեռք բերել արդի աշխատաշուկայի պահանջներին համարժեք հմտություններ, իսկ դասախոսական կազմին՝ շարունակաբար թարմացնել մասնագիտական գիտելիքները:

Ուսանողների և դասախոսական կազմի օտար լեզուների իմացության մակարդակի համընդհանուր գնահատում դեռ չի իրականացվել, թեև քոլեջը նախատեսում է ավելացնել ֆրանսերենի ուսուցումը: Այս ուղղությամբ հստակ մոտեցման բացակայությունը կարող է սահմանափակել միջազգայնացման ներուժը, քանի որ լեզվական ունակությունների զարգացումն անմիջականորեն նպաստում է միջազգային համագործակցության ընդլայնմանը և կրթական ծրագրերի որակի բարելավմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջն ունի արտաքին կապերի ու համագործակցությունների լայն շրջանակ, որի շնորհիվ կարողանում է իրականացնել ուսանողների պրակտիկաները, համատեղ օգտագործել ռեսուրսները գործնական պարապմունքների իրականացման նպատակով, համագործակցությունների շնորհիվ համալրել է ռեսուրսները և զարգացրել ենթակառուցվածքները, ուսանողները ներգրավված են միջազգային մրցույթներում ու փառատոններում, ինչը փորձի փոխանակման հնարավորություն է տալիս՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 9-ի պահանջները:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

Հաստատության 2021-2026 թվականների զարգացման ռազմավարական ծրագրի նպատակների շրջանակում են որակի ապահովման ներքին համակարգի զարգացումն ու որակի ներքին մշակույթի լիարժեք ձևավորումը: Քոլեջում որակի ապահովման համակարգի ներդրման աշխատանքները մեկնարկել են 2024 թվականի հունվարից: Քոլեջում ներդրվել է «Որակի ապահովման բաժնի կանոնակարգ», որում սահմանված են բաժնի գործառույթները, որոնք են ուսումնական ծրագրերի որակի գնահատումը և ապահովումը, ուսանողների ուսումնառության գնահատումը և որակի ապահովումը, դասավանդման, պրակտիկայի արդյունավետության գնահատումը և որակի ապահովումը, ներքին շահակիցների բավարարվածության գնահատումը և որակի ապահովումը, շրջանավարտների վերաբերյալ արտաքին կարծիքի ուսումնասիրումը, ստացված կրթությունից բավարարվածության հարցումների իրականացումը շահակիցների շրջանում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի որակի ապահովման և հավատարմագրման գործընթացները մեկնարկելիս Որակի ապահովման պատասխանատուի կողմից ուսումնասիրվել են հաստատության կանոնակարգերը, հավատարմագրման գործընթացի առանձնահատկությունները, հանդիպումներ և քննարկումներ են կազմակերպվել շահակիցների հետ, ինչպես նաև իրականացվել են մի շարք հարցումներ և դասալսումներ: Մասնավորապես, իրականացվել են հարցումներ ուսանողների և դասախոսների շրջանում՝ քոլեջի կողմից մատուցվող ծառայություններից և տրամադրված ռեսուրսներից վերջիններիս բավարարվածությունը գնահատելու նպատակով: Շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ հարցումների արդյունքները ներկայացվել են մանկավարժական խորհրդի նիստին տնօրենի և որակի ապահովման պատասխանատուի կողմից: Հարցումների արդյունքում պարզ է դարձել, որ ուսանողները բավականաչափ իրազեկված չեն կառավարմանը իրենց մասնակցության ձևերին, ինչպես նաև որ ուսանողների կողմից որպես իրենց հուզող հարցերի բարձրացման օղակ կուրսղեկները չեն նշվել: Նշված տվյալների հիման վրա կազմակերպվել են հանդիպումներ տեղեկատվության տարածման նպատակով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների շրջանում իրականացված հարցումների արդյունքները ցույց են տվել, որ ուսանողները բավականաչափ իրազեկված չեն իրենց իրավունքներին ու պարտականություններին: Հարցման արդյունքների հիման վրա Ուսանողական խորհրդի կողմից ուսանողների շրջանում կազմակերպվել են ուսանողների իրավունքների և պարտականությունների իրազեկման աշխատանքներ:

Որակի ապահովման բաժնի կողմից կազմակերպվել են նաև դասընթացների գնահատումներ, որոնց արդյունքները քննարկվել են ամբիոններում: Սակայն փորձագիտական ուսումնասիրություններց և շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ դասընթացների գնահատումների արդյունքներին դասախոսական կազմը բավականաչափ իրազեկված չէ:

Փաստաթղթերի ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ կիրառվող հարցաթերթերում ընդգրկված հարցերը բավական ընդհանրական են, հիմնականում անդրադառնում են դասին կիրառվող ուսումնամեթոդական նյութերին և դիդակտիկ հագեցվածությանը, դասավանդման առանձնահատկությունները բնորոշող հարցեր ներառված չեն: Փաստաթղթերի ուսումնասիրություններից և փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ հստակ չէ նաև անցկացվող հարցումների մեթոդաբանությունը, մասնավորապես՝ ուսումնասիրվող գործընթացների գնահատումները ենթադրում են 5 միավորանոց սանդղակ, սակայն հարցերի գնահատման համար թույլատրելի են միայն 5-2 թվանշաններով գնահատումները:

Որակի ապահովման գործընթացների համակարգման նպատակով 2024 թվականի հունվարից քոլեջում գործում է կրթության որակի ապահովման պատասխանատուի հաստիք, ով ունի մեկ դրույքաչափ հաստիքային զբաղվածություն: Կրթության որակի ապահովման պատասխանատուի գործառույթները սահմանված են պաշտոնի անձնագրով:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ որակի ապահովման պատասխանատուի կողմից կազմվել է տարեկան աշխատանքների պլան, որում սահմանված նպատակները հիմնականում արտացոլում են Որակի պատասխանատուի պաշտոնի անձնագրով սահմանված գործառույթները: Դրանք են՝ վերահսկել և համակարգել քոլեջում կիրառվող աշխատանքային ուսումնական պլանների և ծրագրերի կազմումը, մշակումը, ապահովել կրթական ծրագրերի մշակման և իրականացման որակի հսկողությունը և ստուգել դրանց համապատասխանությունը սահմանված չափորոշիչներին: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ նաև, որ թեև Որակի ապահովման պատասխանատուի կողմից նախատեսվող աշխատանքների ուղղությունները դասալսումները և հարցումներն են ուսանողների շրջանում, արդուհանդերձ հստակեցված չէ ուսումնասիրվող խնդիրների շրջանակը, ինչպես նաև սահմանված չեն կիրառվող մեխանիզմների նպատակները և կիրառման պարբերականությունը:

Շահակիցների շրջանում դեռ հստակեցված չեն որակի ապահովման համակարգի դերը, համակարգի վերաբերյալ պատկերացումներն ամբողջական չեն, հստակեցված չեն նաև որակի ապահովման գործընթացների ուղղությունները:

Համակարգը ներդրման մեկնարկային փուլում է, ուստի վերանայման գործընթաց դեռևս իրականացված չէ: Համապատասխան մեխանիզմներ ևս նախատեսված չեն:

Քոլեջում ներդրվել է «Ներքին և արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի քաղաքականություն», որով սահմանվում են ներքին և արտաքին շահակիցներից ստացվող հետադարձ կապի մեխանիզմները և գործիքները: Որպես հետադարձ կապի մեխանիզմներ սահմանված են հարցման և հարցազրույցի մեթոդները: Այդուհանդերձ, փորձագիտական ուսումնասիրությունները պարզեցին, որ որակի ապահովման գործընթացների շրջանակում շահակիցների ընդգրկվածության մեխանիզմները և հավաքագրվող տվյալների շրջանակը դեռևս հստակեցված չեն: Ներքին շահակիցներին տեղեկատվությունը հասանելի է դառնում մանկավարժական խորհրդի, ամբիոնների նիստերի միջոցով:

Քոլեջն ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծություն իրականացրել է առաջին անգամ: Ձևավորվել է ինքնավերլուծության թիմ, որի կազմում ընդգրկվել են դասախոսներ, ամբիոնների վարիչներ, վարչական կազմի ներկայացուցիչներ: Ինքնավերլուծության թիմի ընդհանուր համակարգողը և պատասխանատուն հաստատության տնօրենն է: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ինքնավերլուծության իրականացման գործընթացը կազմակերպվել և համակարգվել է որակի ապահովման պատասխանատուի կողմից: Փորձագիտական ուսումնասիրությունները և շահակիցների հետ հանդիպումները պարզեցին, որ ինքնավերլուծության իրականացումը հնարավորություն է տվել որոշակիորեն դիտարկելու քոլեջում առկա խնդիրները, մասնավորապես լսարանային պայմանների բարելավում, նորագույն տեխնոլոգիաների հագեցման կարիք, գրադարանային ֆոնդի համալրման անհրաժեշտություն: Այդուհանդերձ, փորձագիտական

ուսումնասիրությունների համաձայն, քոլեջում ինքնավերլուծության և իրականացված հարցումների արդյունքում նախատեսվող բարելավումների շրջանակները դեռևս հստակեցված չեն:

Անդրադառնալով քոլեջի ներկայացրած ինքնավերլուծությանը՝ որակի արտաքին գնահատման գործընթացների իրականացման տեսանկյունից, հարկ է նշել, որ ներկայացված տվյալները բավական սակավ են եղել, որոշ չափանիշներում վերլուծությունները անհրաժեշտ հիմքեր և տեղեկատվություն չեն պարունակել հաստատության գործընթացների վերաբերյալ:

Արտաքին շահակիցներին տեղեկատվության տրամադրման հարթակ է քոլեջի կայքէջը, որտեղ հասանելի են հաստատության կանոնակարգերը: Սակայն իրականացվող գործընթացների, կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունն ամբողջական չէ, որակի պատասխանատուի կողմից իրականացված վերլուծությունների ամփոփումները կամ դրանց վերաբերյալ քննարկումների մասին տեղեկատվությունը հասանելի չեն կայքում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում հաստատության կողմից որակի ապահովման համակարգի ներդրման ուղղությամբ իրականացված քայլերը, ինչպես նաև որակի ապահովման մշակույթի ձևավորման և զարգացման կարևորության շեշտադրումը: Ռազմավարական ծրագրի շրջանակում փաստաթղթային հենքի ստեղծումը, հարցումների և դասալսումների կիրառումը վկայում են որակի ապահովման գործընթացների զարգացման նախնական ջանքերի մասին: Այդուհանդերձ, փորձագիտական խումբը կարևորում է, որ հաստատությունը հստակեցնի որակի ապահովման համակարգի դերը, այդ թվում՝ համակարգի առջև դրված խնդիրների և նպատակների շրջանակը, ինչը հիմքեր կստեղծի համակարգի ձևավորման և կայացման համար:

Շահակիցների կարիքների գնահատման և վերլուծության մեխանիզմների ներդրումը հատկապես կարևոր է, ինչը թույլ կտա հավաքագրել համակարգված տվյալներ՝ հիմնված կրթական, կազմակերպչական, ֆինանսական և մարդկային ռեսուրսների, ինչպես նաև շահակիցների՝ ուսանողների, դասախոսների, շրջանավարտների և գործատուների արձագանքների վրա:

Դրական է, որ հաստատությունը որակի ապահովման գործընթացների շրջանակում փորձել է ներդնել հարցումների մեխանիզմը՝ շահակիցների կարիքների գնահատման գործիք ստեղծելու նպատակով: Դասախոսների և ուսանողների շրջանում անցկացված հարցումները հնարավորություն են տվել դիտարկելու որոշակի գործընթացներից նրանց բավարարվածությունը և մատնանշել խնդիրներ: Այդուհանդերձ, փորձագիտական խումբը կարևորում է, որ հստակեցվեն հարցումների շրջանակում ուսումնասիրվող գործընթացները, հարցերի բովանդակությունը, գնահատման սանդղակները և հավաքագրվող տվյալների շրջանակը, ինչը կնպաստի կիրառվող գործիքների արդյունավետության բարձրացմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ անհրաժեշտ է ներդնել նաև գործընթացների արդյունավետության մշտադիտարկման մեխանիզմներ, ինչը թույլ կտա դիտարկել իրականացվող գործընթացների արդյունքները, գնահատել առաջընթացը և նախանշել հետագա բարելավումները: Հստակեցված մեթոդաբանությունը կնպաստի հարցումների և այլ տվյալների գործնական կիրառությանն ու որոշումների կայացմանը՝ գործընթացների շարունակական բարելավման նպատակով:

Փորձագիտական խումբը կարևորում է նաև շահակիցների շրջանում հարցումների արդյունքների իրազեկման աշխատանքների և հետադարձ կապի մեխանիզմների բարելավումը, ինչը կնպաստի գործընթացների թափանցիկությանը և տեղեկատվության հասանելիությանը: Միևնույն ժամանակ, խումբը գտնում է, որ հաստատությունը կարող է առավել արդյունավետ օգտագործել կայքէջը գործընթացների վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը հասանելի դարձնելու նաև արտաքին շահակիցների համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում հստակեցված չեն որակի ապահովման համակարգի առջև դրված խնդիրները, շահակիցների կարիքների վերհանման գործուն մեխանիզմներ դեռևս առկա չեն, հաստատության գործունեության բոլոր ուղղությունների վերաբերյալ չեն հավաքագրվում ու պարբերաբար թարմացվում տվյալները, որոնք կդրվեին կառավարչական որոշումների կայացման հիմքում, արտաքին գնահատման նպատակով իրականացված ինքնավերլուծությունն առավելապես նկարագրական բնույթ է կրել, հստակ չեն իրականացված վերլուծությունների արդյունքում բարելավման շրջանակները՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը չի բավարարում չափանիշ 10-ի պահանջները:

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատվում է **անբավարար**:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	**Բավարարում է**
2. Կառավարում ու վարչարարություն	**Բավարարում է**
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	**Բավարարում է**
4. Ուսանողներ	**Բավարարում է**
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	**Բավարարում է**
6. Հետազոտություն և զարգացում	**Բավարարում է**
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	**Բավարարում է**
8.Հասարակական պատասխանատվություն	**Բավարարում է**
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	**Բավարարում է**
10. Որակի ներքին ապահովման համակարգ	**Չի բավարարում**

Հերմինե Գրիգորյան
Փորձագիտական խմբի ղեկավար

17-ը մարտի, 2025 թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Հերմինե Գրիգորյան՝ 1992 թվականին ավարտել է Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու է: 1992 թվականից դասավանդում է Վանաձորի պետական համալսարանում (ՎՊՀ): Ներկայումս զբաղեցնում է Բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնը և հանդիսանում «Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի» ամբիոնի դոցենտ: Վարում է հետևյալ դասընթացները՝ «Մաթեմատիկական ֆիզիկայի հավասարումներ», «Դիֆերենցիալ հավասարումներ», «Կոմպլեքս անալիզ», «Մեկ փոփոխականի ֆունկցիայի դիֆերենցիալ և ինտեգրալ հաշիվ», «Շատ փոփոխականի ֆունկցիայի դիֆերենցիալ և ինտեգրալ հաշիվ» և «Ֆինանսական մաթեմատիկա»: Հետազոտական հետաքրքրությունների շրջանակում ընդգրկված են փոփոխական հաստության անիզոտրոպ սալերի եզրային խնդիրները:

Լիլիթ Աբելյան՝ 2009 թ. ավարտել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը: Ստացել է ուսուցչի, մանկավարժության բակալավրի աստիճան՝ «Պատմություն» մասնագիտությամբ: 2017 թ. ավարտել է նույն համալսարանը և ստացել մանկավարժության մագիստրոսի աստիճան՝ «Պատմություն» մասնագիտությամբ: 2016 թ.-ից Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի դասախոս է: 2020 թ.-ից մինչ այժմ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի որակի պատասխանատուն է:

Օլյա Ավետիսյան՝ 2012-2016թթ.-ին սովորել է Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջում՝ Հագուստի մոդելավում և նախագծում մասնագիությամբ, 2016-2019-ին սովորել է Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետում: Մագիստրոսական կրթություն է ստացել նույն համալսարանի «Հոգեբանություն» կրթական ծրագրում: Աշխատել է «Ալեքս Տեքստիլ» ՓԲԸ-ում որպես կոնստրուկտոր, ինչպես նաև «ԳՈԼԴ ՍՍԱՄ» ընկերությունում՝ 3D մոդելավորող: 2018թ-ից մինչ օրս աշխատում է Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջում մասնագիտական առարկաների ամբիոնի դասախոս է:

Մերի Հովսեփյան՝ 2021 թվականից սովորում է Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջում՝ «Դերասանական արվեստ» մասնագիտությամբ: Մասնակցել է ՈԱԱԿ «Ուսանողության ձայն» նախագծի ուսանող-փորձագետների պատրաստման դասընթացին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

N.	**25.11.2024 թ.**	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում տնօրենի հետ	09:30	10:20	50 րոպե
2.	Հանդիպում փոխտնօրենների հետ	10:30	11:20	50 րոպե
3.	Հանդիպում ինքնավերլուծություն իրականացրած խմբի անդամների հետ	11:30	12:10	40 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:20	13:20	60 րոպե
5.	Հանդիպում շրջանավարտների հետ	13:30	14:20	50 րոպե
6.	Հանդիպում Կառավարման խորհրդի անդամների հետ	14:30	15:20	50 րոպե
7.	Հանդիպում գործատուների հետ	15:30	16:30	60 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:40	18:30	50 րոպե

N.	**26.11.2024 թ.**		Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ամբիոնների վարիչների հետ		09:30	10:20	50 րոպե
2.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների (10-12 ներկայացուցիչ) հետ		10:30	11:20	50 րոպե
3.	Հանդիպում ուսանողների (10-12 ներկայացուցիչ) հետ		11:30	12:20	50 րոպե
4.	Հանդիպում ՈՒԽ ներկայացուցիչների հետ		12:30	13:10	40 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ		13:20	14:20	60 րոպե
6.	Զուգահեռ հանդիպում **«Հագուստի մոդելավորում և նախագծում»** և **«Արվեստի ստեղծագործությունների վերականգնում, կոնսերվացում և պահպանում»** մասնագիտության կրթական ծրագրերի պատասխանատուի հետ	Զուգահեռ հանդիպում «**Դերասանական արվեստ**» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատու/ների հետ	14:30	15:20	50 րոպե

7.	Զուգահեռ հանդիպում **«Հագուստի մոդելավորում և նախագծում»** մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ	Զուգահեռ հանդիպում **«Արվեստի ստեղծագործությունների վերականգնում, կոնսերվացում և պահպանում»** մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ	Զուգահեռ հանդիպում «**Դերասանական արվեստ**» մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ	15:30	16:20	50 րոպե
8.	Զուգահեռ հանդիպում **«Հագուստի մոդելավորում և նախագծում»** մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	Զուգահեռ հանդիպում **«Արվեստի ստեղծագործությունների վերականգնում, կոնսերվացում և պահպանում»** մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	Զուգահեռ հանդիպում «**Դերասանական արվեստ**» մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	16:30	17:20	50 րոպե
9.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում			17:30	19:00	90 րոպե

N.	**27.11.2024 թ.**	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ստորաբաժանումների (Ուսումնական մաս, Կադրերի բաժին, կարիերայի կենտրոն, ուսանողական թատրոն, գրադարան, Ֆինանսական մաս) ղեկավարների հետ	09:30	10:40	70 րոպե
2.	Որակի ապահովման պատասխանատուի հետ	10:50	11:40	50 րոպե
3.	Բաց հանդիպում	11:50	12:30	40 րոպե

4.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	12:30	13:30	60 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:40	14:30	50 րոպե
6.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	14:40	17:30	110 րոպե
7.	Ամփոփիչ հանդիպում ղեկավար կազմի հետ	17:40	18:00	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Կառավարման խորհրդի նիստերի վերջին երեք տարիների արձանագրություններ, որտեղ առկա են տնօրենի հաշվետվությունները	2
2.	Ստորաբաժանումների պլաններ և հաշվետվություններ	2
3.	Խորհուրդների արձանագրություններ	2
4.	Տնօրենի ներկայացրած զարգացման ծրագիր	2
5.	Բյուջե վերջին երկու տարիների համար	2
6.	Հաստիքացուցակ	2
7.	Պաշտոնների անձնագրեր	2
8.	Ամբիոնների նիստերի արձանագրություններ	2
9.	Մատյաններ (յուրաքանչյուր կուրսից՝ մեկական)	3
10.	Պրակտիկայի լրացված օրագրեր, մատյաններ	3
11.	Պլանավորած և չպլանավորած դասալսումների լրացված ձևաչափեր	3
12.	Ուսանողական թատրոնի աշխատանքային պլան և հաշվետվություն Բեմադրությունների ցանկ	3
13.	Ուսանողների ընդունելության ծրագրեր, գնահատման չափանիշներ	3
14.	Պետական ամփոփիչ հանձնաժողովների արձանագրություններ	3
15.	Հանրակրթական առարկաների նկարագրեր	3
16.	ՈԱ կենտրոնի հարցումներ դասընթացների վերաբերյալ, դասալսումների վերլուծություններ, թերթիկներ	3
17.	Ակադեմիական տեղեկագրերի օրինակներ	3
18.	Գնահատման թերթիկների օրինակներ տարբեր մոդուլներից, քննական տոմսեր, հարցաշարեր, պետական քննական հացաշարեր, հարցատոմսեր	3
19.	Ավարտական աշխատանքներ	3
20.	Վարպետության դասերի հիմքեր	3
21.	ՈՒԽ հարցումների հարցաթերթեր, հարցումներների վերլուծություններ	4
22.	Ուսանողների կարիքների վերհանման հարցումների հիմքեր, լրացրած հարցաթերթեր	4
23.	Խորհրդատվական պարապմունքների ժամանակացույց	4
24.	Կարիերայի պատասխանատուի տարեկան պլաններ, հաշվետվություններ, իրականացված աշխատանքների հիմքեր, կարիերայի կենտրոնի վերլուծություններ	4

25.	Շրջանավարտների բազա	4
26.	Ուսանողների կողմից կատարված վերլուծական-հետազոտական աշխատանքներ	4
27.	Ուսխորհրդի աշխատանքների հիմքեր /արձանագրություններ, պլաններ, հաշվետվություններ/	4
28.	Դասալսումների պլան, հաշվետվություն, վերլուծություն	5
29.	Դասախոսների փաթեթներ	5
30.	Դասախոսի պայմանագրի օրինակ/հիմնական, համատեղությամբ աշխատող/	5
31.	Վերապատրաստումների պլան, հիմքեր	5
32.	Ամբիոնների վարիչների ընտրության կարգ	5
33.	Դասախոսական կազմի ռեզերվ	5
34.	Ուսումնաօժանդակ կազմ Նվագակցողների ժանրաբեռնվածության նորմատիվներ Նվագակցողի պայմանագրի նմուշ	5
35.	Տեղակալների, ամբիոնների վարիչների պաշտոնների անձնագրեր	5
36.	Դասախոսների գիտական աշխատանքների ցանկ	6
37.	Ուսանողների հետազոտական, ինքնուրույն աշխատանքների օրինակներ	6
38.	Ֆինանսական հաշվետվություն	7
39.	Սոցիալական հարթակների դիտելիության տվյալներ	8
40.	Համագործակցության հուշագրերի ցանկ և հուշագրեր	9
41.	Պրակտիկայի վայրերի ցանկ, պայմանագրեր	9
42.	ՈԱ պատասխանատուի տարեկան պլանավորում, նախորդ տարվա հաշվետվություն, որակի կարճաժամկետ և երկարաժամկետ պլանավորումներ	10
43.	ՈԱ պատասխանատուի պաշտոնի անձնագիր	10
44.	Կարիքների վերհանման հարցումների ցանկ	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Լսարաններ,
2. ստորաբաժանումներ,
3. համակարգչային լսարաններ,
4. արվեստանոցներ,
5. դահլիճ,
6. գրադարան:

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հաստատված է
«Երևանի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի և արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի 04.07.2024թ. N6/2024որոշմամբ

«Երևանի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի և արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ
կառուցվածքը



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՄԿԾ- մասնագիտության կրթական ծրագիր

ՄԿՈՒ- Մասնագիտական կրթություն եւ ուսուցում

ՄՈՒՀ- մասնագիտական ուսումնական հաստատություն

ՈԱ- որակի ապահովում

ՈԱԱԿ - Մանագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն

ՈԱՇ- որակավորումների ազգային շրջանակ

ՌԾ- ռազմավարական ծրագիր

ՈՒԽ- ուսանողական խորհուրդ

ՈՒՕ կազմ-ուսումնաօժանդակ կազմ